Հայաստանն ու Իրանը նույն անվտանգային միջավայրում են, եւ պետք է մեր քաղաքականությունը լրացնի մեկը մյուսին, որ տարածաշրջանում ունենանք իրական անվտանգություն եւ չեզոքացնենք մեզ սպառնացող վտանգները: Երբ Իրանը փորձում է լծակներ գործադրել Ադրբեջանի ուղղությամբ, Հայաստանը չպետք է փրկության պատուհան բացի:

Կարդացեք՝ էջ 4



Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը սկսվել է 2022 թ. վերջին, շինարարության ավարտի ժամկետը երկարաձգվել է, պետք է ավարտվեր 2024 թ. հունիսին: Դպրոցը կառուցվում է պետբյուջեի ֆինանսավորմամբ՝ 1 միլիարդ 218 միլիոն դրամով, շինարարությունն իրականացնում էր «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն, աշխատանքների մի մասն է արված:

Կարդացեք՝ էջ 7



Որտեղից են վերցրել Նիկոլ Փաշինյանի շնորհավորանքի տեքստը՝ ուղղված Իրանի Գերագույն առաջնորդ այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեիին՝ այն տարածած լրատվամիջոցները, ո՞վ է նրանց տրամադրել տեքստը: Փորձեցինք պարզել, սակայն ո՛չ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական էջում, ո՛չ կառավարության էջում հայտարարությունը չկա:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 36 (4171), 11 մարտ, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Արդեն որերորդ շաբաթն է՝ բժիշկներն ահազանգում են, որ առողջության համընդհանուր ապահովագրության ներդրումից հետո իրենց ծանրաբեռնվածությունը զգալիորեն մեծացել է, սակայն նախորդ ամիսների համեմատ ավելի ցածր աշխատավարձ են ստացել: Իսկ ոմանց աշխատավարձը մոտ 50 տոկոսով նվազել է: Թե ինչ հաշվարկ է գործում, ինչու է բուժաշխատողների աշխատավարձը նվազել, առողջապահության նախարարությունից հստակ պարզաբանում չեն ներկայացնում: Օրերս ոլորտի ՀԿ-ների ներկայացուցիչները բողոքի ակցիա իրականացրին Ազգային ժողովի դիմաց՝ խորհրդարանական խմբակցություններին խնդրելով ուշադրություն դարձնել բուժաշխատողների աշխատավարձերի խնդրին: Մենք տեղեկացանք, որ «Հայաստան» դաշինքը որոշել է աշխատանքային քննարկում անցկացնել ուրբաթ օրը, հրավիրել մի շարք ԲԿ-ների ներկայացուցիչների: Հրավեր է ուղարկվել նաեւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին, ՄԻՊ Անահիտ Մանասյանին՝ քննարկելու ստեղծված աբսուրդ իրավիճակը: Աշխատանքային քննարկման կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է պատգամավոր Արմենուհի Կյուրեղյանը:

ՔՊ-ական պատգամավոր Կարեն Սարուխանյանն իշխող թիմում միակը չէ, որին Նիկոլ Փաշինյանը հորդորել էր թմրանյութի թեստ հանձնել: Ասում են՝ նախընտրական ցուցակում էլի կան նման թեկնածուներ, որոնց կասկածում են սիստեմատիկաբար թմրամիջոց օգտագործելու մեջ, եւ Փաշինյանը մի քանիսին էլ է ասել՝ թեստ հանձնեք: Մեզ պատմեցին, որ «կասկածյալներին» Փաշինյանն ասել է, որ պատգամավոր դառնալու ախորժակ չպահեն, բայց անգործ չեն մնա, ընտրություններին լավ աշխատելու դեպքում՝ հետագայում գործադիրում պաշտոն կստանան:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել, թե ընթացիկ տարում՝ 2026 թվականի հունվարի 1-ից առայսօր Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատողները որքան պարգեւավճար են ստացել: Մարզպետի աշխատակազմից հայտնել են, որ մարտի 6-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 15 միլիոն 210 հազար 500 դրամ պարգեւավճար: Այսինքն, ընդամենը 2 ամսում Տավուշի մարզպետարանում 15 միլիոն դրամից ավելի պարգեւավճար է բաժանվել:

Վայրենություն

Հասարակության կուլտուրայի, հումանիզմի մակարդակը որոշելու տասնյակ, գուցե՝ հարյուրավոր չափորոշիչներ կան, սկսած կենցաղավարության կանոններից, վերջացրած մարդկային շփումներով ու ավանդույթներով: Բայց դրանց թվում երկու շատ կարեւոր ցուցիչ կա, որոնք խոսում են այն մասին, թե ինչպիսին է տվյալ հասարակությունը: Դա շրջակա միջավայրի՝ բնության եւ կենդանիների նկատմամբ հանրային վերաբերմունքն է: Այն հասարակությունը, որտեղ կենդանիների հանդեպ սադիստական, սպառողական վերաբերմունք կա, չի կարող բարձրակարգ համարվել: Նույնը՝ ծառի ու ծաղկի, բնական ռեսուրսների նկատմամբ վերաբերմունքին է վերաբերում: Երբ տեսնում ես, թե ինչ բարբարոսությամբ ու անփութությամբ են վարվում բնության հանդեպ մեր հասարակությունը եւ իշխանությունը, հասկանում ես, որ մի հետամնաց աֆրիկյան երկրում անգամ երեւի նման վայրենություն չկա: Որովհետեւ ցանկացած բանական մարդ հասկանում է, որ ծառը, ծաղիկը, խնամված բնությունը մաքուր օդ է, հաճելի միջավայր, առողջություն: Իսկ դրանց բացակայությունը՝ հիվանդություններ, կարճատեւ կյանք, տգեղ ու աղքատիկ պեյզաժ: Ո՞վ կարող է բանական բացատրություն տալ այն ամենին, ինչը վերջին տարիներին անում է Երեւանի քաղաքապետարանը մայրաքաղաքում: Ոչ ոք: Ինչո՞ւ են կանաչ ծառերը հատվում, դրանք փոխարինվում շիվերով, երբ քաղաքում հազարավոր հեկտարներ կան, որտեղ կարելի է նոր ծառեր տնկել՝ առանց հներին ձեռք տալու: Ինչո՞ւ է Երեւանի կանաչապատման ՊՈԱԿ-ը դարձել ծառ հատող, այլ ոչ թե ծառ տնկող կազմակերպություն: Այս ի՞նչ պաթոլոգիկ ատելություն է բուսականության նկատմամբ: Եվ ինչո՞ւ հանրության կարծիքը հաշվի չի առնվում: Մենք պարբերաբար հայտնաբերում ենք, որ այսուայնտեղ ծառեր են հատվել, եւ դրա մեղավորները չեն պատժվում:

Մինչ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Սամվել Կարապետյանի շուրջ ընդդիմությանը միավորվելու հորդորներով է հանդես գալիս, նրա գլխավորած կուսակցությունը պատրաստվում է համագումարի, որի ժամանակ ենթադրվում է, որ կհաստատեն նաեւ նախընտրական ցուցակի առաջին 30 համարների անունները, ինչպես օրենքն է նախատեսում: Մեր տեղեկություններով, մարտի 14-ին, կառավարության նիստերի դահլիճում ՀԱԿ-ը համագումար է հրավիրել, կուսակցությունն ավելի վաղ հայտարարել է հունիսյան ընտրություններին մասնակցելու մասին, իսկ ցուցակը կգլխավորի ՀԱԿ վարչապետի թեկնածու, ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Զուրաբյանը:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏԻԿԻ ԲԵՐԱՆՈՎ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Հունիսի 7-ի ընտրություններին սահմանադրական մեծամասնություն վերցնելու իշխանությունների մեծաբերան հայտարարություններին զուգահեռ, իշխանության գործողությունները մատնում են, որ ՔՊ-ն նախանձելի վիճակում չէ եւ հող է նախապատրաստում քաղաքական մրցակիցների դեմ ռեպրեսիաների համար: Սորոսական Քրիստինե Գրիգորյանի ղեկավարած Արտաքին հետախուզության ծառայությունը երեկ մի տարօրինակ հայտարարություն տարածեց այն մասին, թե «այլ երկրում ՀՀ քաղաքացիների նկատմամբ ճնշումներ» են գործադրվում՝ «սպասվող ընտրական գործընթացներին միջամտելու» նպատակով: «Այլ երկիր»-ը, բնականաբար, Ռուսաստանն է, որի անունը վախենում են տալ, բայց որտեղ «հատուկ ծառայությունների անունից տարբեր դերակատարներ» աշխատում են, որ «հայազգի եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց» մղեն՝ աջակցելու ընտրություններին մասնակցող որոշ ուժերին: Եվ դա արտահայտվելու է «ֆինանսական եւ կազմակերպական բնույթի աջակցությամբ»: Նշենք, որ իշխանական քարոզչամեքենան էլ ակտիվորեն լուրեր է տարածում, թե իբր հազարավոր հայեր ՌԴ-ից ընտրություններից առաջ գալու են Հայաստան եւ իրենց քվեն տալու են ընդդիմությանը, մասնավորապես՝ Սամվել Կարապետյանի ուժին: Իշխանական մեր աղբյուրը բացահայտեց, որ այս հայտարարությամբ հող են նախապատրաստում ընդդիմության դեմ գործողությունների համար, եթե ընտրությունների շեմին սոցհարցումների արդյունքներն այսօրվա պես աղետալի պատկեր արձանագրեն ՔՊ-ի համար: Աղբյուրը չբացառեց, որ Փաշինյանը կկիրառի «մոլդովական սցենար» եւ անօրինական որոշում կկայացնի՝ որոշ ուժերի դուրս մղելով ընտրապայքարից:

ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞Վ ՊԱՇՏՊԱՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՄԵՐԺՈՂ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻՆ, ԵԹԵ ԻՐԵՆՔ ԻՐԵՆՑ ՉԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի շուրջ աղմուկը չի դադարում: Այս ինստիտուտի առջեւ, ըստ համառորեն շրջանառվող խոսակցությունների, խնդիր է դրվել հող նախապատրաստել՝ ադրբեջանցիների մուտքը Հայաստան ապահովելու համար:

Առաջին քայլը Հայաստանի նոր քարտեզի մշակումն է, որում նշված կլինեն նախկինում ադրբեջանցիներով բնակեցված վայրերի ադրբեջանական տեղանունները: Բայց գիտնականները տապալել են նախագիծը:

Այս մասին մարտի 3-ին գրեց 24news.am կայքը, ապա տեղեկությունը տարածվեց: Ըստ կայքի՝

«Արեւմտյան Ադրբեջան»-ին վերաբերող հարցը քննարկվել է, սակայն նախապես ընդգրկված չի եղել օրակարգում: Նոր քարտեզի մշակումը ԿԳՄՍՆ հայտարարած «Նպատակային ծրագրեր-2027» մրցույթի շրջանակում էր լինելու, իսկ նախագիծը, ըստ լուրերի, բերել է Կադաստրի կոմիտեն՝ այն քողարկելով «Համապարփակ ուսումնասիրություն ՀՀ բնակավայրերի պատմության վերաբերյալ» անվան տակ: Պատմաբանները հասկացել են, թե ինչի մասին է խոսքը, եւ դեմ են արտահայտվել Կադաստրի կոմիտեի բերած նախագծին:

Ինչ է ստացվում. արդյոք իշխանությունը որոշե՞լ է նախ քարտեզ ստեղծել ադրբեջանական տեղանուններով, հետո հաստատել այն պետականորեն՝ կադաստրի միջոցով, հետո էլ, հավանաբար, սկսել ադրբեջանցիների «վերադարձը»՝ այստեղից բխող բոլոր հետեւանքներով:

Ասում են՝ ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Համո Սուքիասյանը նույնիսկ խոստացել է փող բերել Կադաստրի կոմիտեից, բայց նախագիծը, միեւնույն է, չի հաստատվել: **Համո Սուքիասյանը** վստահեցնում է, որ ՁԼՄ-ներով տարածված տեղեկությունը խեղաթյուրում է իրականությունը: «Նման քարտեզ կամ քարտեզի մշակում չկա: Կեղծ ինֆորմացիա է»,- ասում է նա՝ «Հրապարակին» տրամադրելով ինստիտուտի հայտարարությունը:

Ըստ դրա, ինստիտուտին առաջարկվել է՝ ներգրավելով այլ հաստատությունների մասնագետների, պատրաստել գիտահետազոտական ծրագրի հայտ, որը ենթադրում է համապարփակ ուսումնասիրություն ՀՀ բնակավայրերի պատմության վերաբերյալ: Առաջարկվել է ծրագիրն իրականացնել ՀՀ կադաստրի կոմիտեի հետ համագործակցությամբ, քանի որ հետազոտության արդյունքները կարող էին օգտագործվել՝ Կադաստրի կոմիտեի պատրաստած ՀՀ Ազգային գեոպորտալի «Աշխարհագրական անվանումների պետական քարտադարան»-ի տվյալներն առավել ամբողջական դարձնելու նպատակով:

«Ինչ վերաբերում է բնակավայրերի «հին անուններին», ապա ոլորտին ծանոթ յուրաքանչյուր պատմաբան գիտի, որ Հայաստանի հնագույն տեղանունները հայկական են, որովհետեւ Հայկական լեռնաշխարհում հազարամյակներ շարունակ ապրել եւ սեփական ուրույն քաղաքակրթությունն են կերտել հայերը: Առաջարկվող ծրագրի նպատակը լինելու էր այս հանգամանքի շեշտադրումը: Քննարկման ընթացքում հնչել են կարծիքներ թեմայի կարեւորության, ինչպես նաեւ՝ հետազոտողների փոքրաթիվ խմբով նման ծավալուն ծրագիր իրականացնելու դժվարության մասին, ուստի մրցույթին մասնակցելու դիմում չի ուղարկվել»,- ասված է ինստիտուտի տարածած տեքստում: Նաեւ նշված է, որ գիտական քննարկումը լրատվամիջոցին ներկայացվել է մանիպուլյատիվ ձեւով, եւ որ ինստիտուտը «չի իրականացրել եւ չի իրականացնելու որեւէ գործունեություն, որը կարող է վնասել պետական շահերին կամ գիտականությանը»:

Փաստորեն, եղել է ինչ-որ գիտահետազոտական նախագիծ՝ մեր բնակավայրերի պատմությանն ու քարտեզին վերաբերող, հայերի պատմական դերը շեշտադրող, որը ենթադրում է համապարփակ ուսումնասիրություն ՀՀ բնակավայրերի պատմության վերաբերյալ: Դրա տակ պետք է լիներ հստակ ֆինանսավորում, բայց պատմաբանները համարել են, որ այն շատ աշխատատար է, ու մերժել են: Ինչո՞ւ: Հազիվ մի լավ բանի համար փող էին տալիս, ինչո՞ւ պետք է հրաժարվեին պատմաբանները՝ ասելով, թե ռեսուրս չունեն: Ենթադրենք, թե ադրբեջանական տեղանունների հարց չեն քննարկել, բա ի՞նչ են քննարկել ու ի՞նչն են մերժել՝ հասկանալի չէ: «Ադրբեջանական տեղանունների հարց չի քննարկվել: Քննարկվել է ՀՀ ներկայիս աշխարհագրական անունների վերաբերյալ գեոպորտալում եղած տեղեկատվությունը լրացնելու հարցը»,- պատասխանում է Համո Սուքիասյանը: Արդյո՞ք դուք խոստացել եք վարձատրություն, եթե այդ ծրագիրն ընդունվի: Սուքիասյանը պատասխանում է. «Նշվել է, որ եթե Հայաստանի տեղանունների վերաբերյալ հետազոտական ծրագիրը Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի մրցույթում հաղթի, ինստիտուտին լրացուցիչ գումարներ կգան: Բայց մրցույթին դիմում չի եղել: Ողջ իրականությունն ինստիտուտի էջում դրված է»:

Եթե դա լավ նախագիծ էր՝ հայերի դերը շեշտող, ինչո՞ւ չեն ընդունել, գրել եք, որ ռեսուրս չկա, ինչը մի տեսակ համոզիչ չէ, այդքան պատմաբաններ ունեք, չե՞ն ուզում լավ գործ անել ու հետն էլ վարձատրվել: «Ինչպես մեր գործընկերներից մեկը շեշտեց, դա բաժնի վարիչ»,- ասում է Մելքոնյանը, որը ժամանակին քննադատում էր իշխանություններին՝ Արցախին վերաբերող պատմական ասպեկտները նենգափոխելու համար, իսկ այսօր ոչ մի քննադատական բառ իշխանության հասցեին չի ասում:

Խոսեցինք կովկասագետ **Հովիկ Ավանեսովի** հետ, որը եւս խորհուրդ տվեց կարդալ տնօրինության հայտարարությունը: Ի՞նչ է քննարկվել, ի վերջո, նիստի ժամանակ: Նա չգիտի, քանի որ գիտխորհրդի անդամ չէ: Լավ կլինի՝ դիմեք գիտական քարտուղար Հակոբ Մուրադյանին: «Հակոբ Մուրադյանը գործուղման է, զանգեք ուրբաթ»,- պատասխանեցին քարտուղարությունից, իսկ թե ովքեր են գիտխորհրդի անդամները, այնտեղ չգիտեն:

Պատմաբան, ՀԱԿ անդամ Աշոտ Սարգսյանն իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել՝ փաստացի հաստատելով լուրերը եւ կոչ անելով պաշտպանել պատմաբաններին, որոնք դուրս են եկել թրքաիպատակ իշխանության դավաճանական նախագծի դեմ: «Ու տասնյակ այլ գիտահետազոտական ինստիտուտներից, հնչեղ անուններով հասարակական կազմակերպություններից, «բարոյական հեղինակություն» տիտղոսակիր մտավորականներից ոչ մեկը հրապարակավ չի՞ պաշտպանել Պատմության ինստիտուտին, իր անհանգստությունը չի՞ հայտնել, իշխանությանը մի թթու խոսք չի՞ ասել… Քաղաքականությամբ չե՞ն զբաղվում: Բայց մի՞թե սա քաղաքական խնդիր է: Անգամ գիտելիքի ու գիտակցության խնդիր չէ սա: Պետության ու ազգի գոյաբանական խնդիր է եւ նույնիսկ ինքնապաշտպանական կենդանական բնազդի մակարդակում արձագանք պիտի առաջացներ: Եթե Պատմության ինստիտուտը մենակ մնա, հաստատելու է սա, հաստատելու է իշխանության պարտադրանքով եւ ձեր լռության օգնությամբ»,- գրել է **Աշոտ Սարգսյանը**:

«Հրապարակի» հետ զրույցում նա ասաց, որ հայտնի նիստի մասին տեղեկացել է մամուլից, ներկայացված գրառումն անելուց 5 օր առաջ, սպասել է, սակայն պաշտոնական հերքում չի եղել: «Ինստիտուտի տարածած տեքստն ինձ էլ համոզիչ չթվաց»,- ասաց նա:

Պատմաբան եւ դասագրքերի հեղինակ **Աշոտ Ղուկասյանը**, սակայն, պաշտպանեց կոլեգաներին. «Փաստորեն, տեսեք, նրանց մեջ կան ազնիվ, հայրենասեր մտավորականներ, մանավանդ՝ պատմաբաններ: Եթե նրանք մերժել են, ուրեմն ինչ-որ բան փոխվել է նրանց ներսում, ուրեմն մտածել են՝ էս ի՞նչ ենք անում, հայրենիք ենք կորցնում, հիմա էլ ադրբեջանական ջրաղացի՞ն ջուր լցնենք»: Մեզ հետ զրույցում նա ասաց, որ «Արեւմտյան Ադրբեջանին» վերաբերող նախագծին ծանոթ չէ, բայց այս իշխանություններից ամեն ինչ սպասելի է՝ չի զարմանում: «Այսօր ի՞նչ անհրաժեշտություն կա տարածաշրջանային թոհուբոհում քննարկել նման հարց: Հասկանալի է, որ դրանով սպասարկում են Ադրբեջանի պահանջն ու շահերը: Եթե դա ճիշտ է, ապա կարծում եմ՝ ադրբեջանական անունները վերականգնվում են, որ, իրենց ասելով՝ 300 հազար ադրբեջանցի բերեն, բաժանեն այդ գյուղերի վրա, որտեղ նրանք իբր բնակվել են: Սա մեր հերթական ողբերգությունն է»,- ասում է պատմաբանը: Ըստ նրա՝ սա հետեւանք է Արցախի հայաթափման եւ ադրբեջանցիների՝ Հայաստանից արտագաղթի միջեւ հավասարության նշան դնելուն, ինչն արեց Փաշինյանը: «Փոխանակ նա խոսի հայերի՝ Ադրբեջանից բռնագաղթի մասին՝ 1980-ականների վերջին, 90-ականների սկզբին, կեղծ դրույթներ է տարածում, թե ադրբեջանցիներն իրավունք ունեն նման պահանջներ դնել, որովհետեւ 300 հազար ադրբեջանցի գնացել է»: Այս թիվը, ըստ Աշոտ Ղուկասյանի, եւս կեղծ է. «Հայաստանում եղել է մինչեւ 200 հազար ադրբեջանցի, ոչ թե՝ 300 հազար, իսկ Ադրբեջանից եկել է 400-450 հազար հայ, բայց այս հարցը չի բարձրացվում, այդ հարցը պետք է բարձրացնել, մանավանդ, որ դրանք բնիկ հայկական հողեր են եղել՝ բնիկ հայ բնակչությամբ»:

Ադրբեջանը պահանջում է, Փաշինյանը կադաստրի միջոցով իրավական հենք է ապահովում, լավ, իսկ մենք ի՞նչ պետք է անենք: «Առաջին քայլն այս թշնամի իշխանություններից ազատվելն է, երկրորդը՝ մեր մտավորականների ակտիվությունը: Հիշում եք, արցախյան շարժումը որ սկսվեց, անմիջապես ստեղծվեց հայերեն ու ռուսերեն տեղեկատու՝ Լեռնային Ղարաբաղի անցյալի, պատմության մասին: Հիմա գիտնականները, քարտեզագրողները շատ արագ կերպով, պատմական աղբյուրները նշելով, պետք է տեղեկանք պատրաստեն: Պետք է մտավորականներն իրենց ձայնը բարձրացնեն, ոչ թե ջայլամի պես գլուխները մտցնեն ավազի մեջ, մեր ժողովուրդը հավատում է մտավորականներին եւ կլսի նրանց ձայնը»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Դեռ տանիքները շափում են, կամ՝ ընտրությունների շեմին ինչպես խաբել գյուղացիներին

Օրեր առաջ գրել էինք, որ Լոռվա եւ Տավուշի գյուղերի բնակիչներին ասել են, թե առաջիկայում իրենց առանձնատների տանիքների շիֆերներով ծածկերը փոխելու են. ասբեստից ծածկերի փոխարեն, որոնք քաղցկեղածին են եւ ողջ աշխարհում վաղուց փոխարինվել են, տեղադրելու են նոր, մետաղաթիթեղյա ծածկեր: Մարզերում սկսել էին հաշվառում կատարել, թե քանի նման տանիք կա: Մեզ նման տեղեկատվություն էր հասել Ստեփանավան համայնքի Գյուլագարակ, Տավուշին սահմանամերձ Ոսկեպար, Ոսկեվան, Բաղանիս, Կիրանց գյուղերի բնակիչներից: Գյուղերի վարչական ղեկավարները սկզբում հայտնել էին, որ տանիքները փոխելու համար պետք է հաշվառել միայն առանձնատների ծածկերի շիֆերների մակերեսը, սակայն հետո պահանջել էին տրամադրել նաեւ տներին կից պահեստների, խորդանոցների շիֆերների ընդհանուր մակերեսի տվյալները: Այդ տվյալները հավաքագրվել են գյուղապետարանների կողմից եւ ուղարկվել մարզպետարաններ: Գյուղերում բնակիչները, անգամ նրանք, ովքեր որոշել էին սեփական միջոցներով փոխել իրենց տների ծածկերը, լսելով, որ նման ծրագիր կա, դադարեցրել են աշխատանքները եւ սպասում են, որ պետությունը դա անի: Բայց գյուղացիները նաեւ տարակուսած են՝ եթե ասբեստի շիֆերներն իրոք քաղցկեղ են առաջացնում, ինչո՞ւ նախկինում՝ տասնամյակներ շարունակ այդ մասին չեն ասել իրենց եւ չեն փոխել այդ ծածկերը: Ուշագրավ է, Տավուշի վերոհիշյալ գյուղերը տուժել են 2024թ. սահմանազատման անվան տակ՝ միակողմանի կերպով Ադրբեջանին տարածքներ, պաշտպանական դիրքեր հանձնելու հետեւանքով: Մարտի 5-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել. «Տավուշի մարզի ո՞ր գյուղերում եք առանձնատների եւ այլ կառույցների ծածկերի փոփոխություն անելու, ընդհանուր՝ քանի՞ քմ մակերեսով շիֆեր եք նախատեսում փոխել: Որքա՞ն է այդ ծրագրի արժեքը, ո՞վ է ֆինանսավորողը, ե՞րբ է մեկնարկելու այդ ծրագիրը, ե՞րբ է ավարտվելու, ո՞վ է իրականացնելու տանիքների ծածկերի փոխարինման աշխատանքները»: Տավուշի մարզպետի աշխատակազմից մեզ հայտնել են. «Մարզում ասբոշիֆերի մակերեսի գույքագրման աշխատանքները կատարվում են ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հանձնարարության հիման վրա, փոխհատուցման մասին որեւէ հանձնարարություն չկա»: Ի դեպ, մեր տեղեկությունը գրելիս եզրակացրել էինք, որ սա իրականացվում է որպես նախընտրական կաշառք՝ հունիսի 7-ի ընտրություններում այս գյուղերի բնակչության քվեն ստանալու նպատակով: Մեր վերլուծությունը տարածքային կառավարման նախարարության սրտով չի եղել, նույն օրը հերքում էին տարածել, թե «Հրապարակի» նշված հոդվածը «չի համապատասխանում իրականությանը»: Հաջորդ անգամ երեւի ՏԿԵՆ-ին պետք է հարցնենք, թե ինչ հետեւություններ անենք իրենց քայլերից եւ ինչ տեսակետ հայտնենք, որ «իրականությանը համապատասխանի»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՊ-ի թիրախում պատանիներն ու տարեցներն են

Հշխանական մեր աղբյուրներից տեղեկացանք, որ ՔՊ նախընտրական քարոզչության մարտավարությունը երկու թիրախային ուղղվածություն ունի՝ «աշխատել» 18-22 տարեկան, քաղաքականությունից հեռու, հոսանքի տակ հեշտ ընկնող երիտասարդության վրա եւ տատիկ-պապիկների: Այս երկու տարիքային խմբին են գլխավորապես ուղղված ՔՊ-ի ասելիքն ու անելիքը, քանի որ հասկանում են՝ միջին վիճակագրական գիտակից քաղաքացուն դժվար է համոզել, որ իրենց ընտրեն: Պատահական չէ, որ Փաշինյանն ու թիմը տարատեսակ մեյմուններ են դիմում, դիսկոտեկներ կազմակերպում, երգում-պարում դրա համար: Ի դեպ, ապրիլի սկզբին հերթական դիսկոտեկն է լինելու՝ «Վարչաբենդի» մասնակցությամբ, իսկ 65 պլյուս տարիքային խմբի համար գործարկեցին առողջության համընդհանուր ապահովագրության համակարգը եւ կենսաթոշակների բարձրացումը: Ընդ որում, ապահովագրության համակարգի գործարկումից ի վեր բուժաշխատողների վարձատրությունը նվազել է: Իսկ կենսաթոշակների անգամ մինչեւ 10 հազար դրամ բարձրացումը «ռիսկային որոշում» է համարվել, եւ այս մասին հենց կառավարության եզրակացության մեջ է արձանագրված: Ըստ էության, բյուջեի հաշվին մարդկանց կաշառելու Փաշինյանի ճարահատյալ ձեռնարկը ծանր է նստելու ՀՀ պետական բյուջեի, հետեւաբար՝ ողջ հասարակության վրա, եւ այդ մասին զգուշացրել է ֆինանսների նախարարությունը:

Կառավարությունը, հիշեցնենք, մարտի 5-ի նիստում ընդունեց ապրիլի 1-ից թոշակների բարձրացման մասին որոշումը, ըստ որի՝ 600 հազար կենսաթոշակառուի ամսական թոշակն ապրիլի 1-ից կբարձրանա. նվազագույն կենսաթոշակ ստացողներինը՝ 10 հազար դրամով, մյուսներինը՝ ավելի նվազ չափով: Կենսաթոշակների, նպաստների չափի ավելացումը պետբյուջեի վրա տարեկան 78.7 մլրդ դրամի կամ ավելի քան 208 մլն դոլարի հավելյալ ծախս է նշանակում, ինչը մտադիր են կատարել 2025թ. տնտեսական աճի հաշվին, սակայն ֆինանսների նախարարությունը, պարզվում է, համաձայն չէ այս որոշման հետ եւ նախագծի ամփոփաթերթում ռիսկային է գնահատել թոշակների բարձրացումը, քանի որ «նախագծով հստակ գնահատված չեն ֆինանսական կարիքի ֆինանսավորման աղբյուրները»:

Թոշակների բարձրացման մասին առաջինն անոնսած Նիկոլ Փաշինյանը դեռեւս փետրվարի 25-ին ֆեյսբուքյան իր էջում հայտարարել էր, որ «Հայաստանում 2025թ. տնտեսական աճը եղել է կանխատեսվածից ավելի բարձր, սա մեզ համար լրացուցիչ հնարավորություն է ստեղծում, եւ Հայաստանի քաղաքացիներն այդ աճի արդյունքը պետք է տեսնեն իրենց կյանքում: Կարծում եմ՝ հենց իրենք՝ թոշակառուները, այս որոշման մեջ ունեն որոշակի դերակատարում, որովհետեւ հետվճարի համակարգից հետո հատկապես նրանք ավելի ու ավելի շատ են անկանխիկ առեւտուր անում՝ այդպիսով նպաստելով, որ ստվերային շրջանառությունը ՀՀ-ում կրճատվի»: Մինչդեռ ֆինանսների նախարարությունը հակադարձում է. «Հստակեցված չեն գնահատված ֆինանսական կարիքի ֆինանսավորման աղբյուրները»: Այս մասին նախագծի ամփոփաթերթում կարծիք է հայտնել պատկան մարմինը՝ առաջարկելով ներկայացնել ոլորտի այլ ծրագրերի օպտիմալացման առաջարկություններ, որոնց տնտեսումների հաշվին հնարավոր կլինի իրականացնել հավելյալ ծախսերի ֆինանսավորումը: Նախարարությունը նաեւ առաջարկել է տարվա ընթացքում կատարված տնտեսումներն ու հավելյալ ռեսուրսներն առաջնահերթ ուղղել արդեն իսկ ստանձնած պարտավորությունների կատարմանը եւ այսուհետ ձեռնպահ մնալ նոր պարտավորություններ առաջացնող նախաձեռնություններից:

«Հաշվի առնելով ներկայացված առաջարկի քաղաքական եւ սոցիալական հնչեղությունը՝ այդուհանդերձ, ֆիսկալ կայունության տեսանկյունից հարկ ենք համարում նշել, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է 2026թ. եւ հետագա տարիների համար ընթացիկ ծախսերի էական աճին, ինչը հանգեցնելու է հետագա տարիներին բազային բյուջեի սոցիալական ծախսերի զգալի իներցիոն աճերի եւ էապես սահմանափակելու է ՀՀ կառավարության՝ այլ ուղղություններով ծախսեր իրականացնելու հնարավորությունները: Եթե վերջինիս ավելացնենք առկա ֆիսկալ սահմանափակումները, ինչպես նաեւ՝ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգից բխող՝ ընթացիկ ծախսերի գծով զգալի ֆիսկալ ճնշումները եւ բազմաթիվ այլ ուղղություններով գեներացվող հավելյալ ծախսային կարիքները 2026թ. եւ հետագա տարիների համար, ներկայացված առաջարկը համարում ենք բավականին ռիսկային»,- նշել է նախարարությունը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Կուսակցությունների գրանցման ընթացքում կերեվա

ՔՊ-ի կցորդը դարձած Հայաստանի արտաքին հետախուզության ծառայությունը, փոխանակ արտաքին վտանգներն արձանագրի եւ իր բուն գործառույթներով զբաղվի, երեկ հայտարարություն տարածեց՝ «այլ երկրում ՀՀ քաղաքացիների նկատմամբ գործադրվող ճնշումների եւ սպասվող ընտրական գործընթացներին միջամտության վերաբերյալ»: Հայտարարության մեջ ասվում է. «Արտաքին հետախուզության ծառայությունը հետախուզական տեղեկություններ է ստանում, որ այլ երկրում տվյալ երկրի հատուկ ծառայությունների անունից հանդես գալով, տարբեր դերակատարներ փորձում են ճնշում գործադրել հայազգի եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող ու տվյալ երկրում տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ՝ վերջիններիս մղելով Հայաստանում սպասվող խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած քաղաքական որոշ ուժերին աջակցելու գործողություններ իրականացնելուն, որոնք ներառում, սակայն չեն սահմանափակվում տվյալ քաղաքական ուժերին նշված գործարարների կողմից ֆինանսական եւ կազմակերպական բնույթի աջակցության գործողություններով»:

ԱԱԾ նախկին տնօրեն **Միքայել Համբարձումյանին** խնդրեցինք մեկնաբանել այս հայտարարությունը՝ ինչո՞ւ է Արտաքին հետախուզական ծառայությունը միջամտում Հայաստանի ներքաղաքական հարցերին: «Իմ կարծիքով՝ ինֆորմացիա են ստացել եւ հրապարակել են այն, այդ քայլով կանխարգելիչ նպատակ են հետապնդում կամ էլ այս ամենը հետագայում այլ նպատակներով են օգտագործելու, օրինակ՝ կուսակցությունների գրանցման ընթացքում այն կթողնի իր հետեւանքը»,- կանխատեսում է Համբարձումյանը:

Իսկ եթե անձը ՀՀ քաղաքացի է, բայց այլ երկրում է ապրում եւ ընտրություններին Հայաստան է գալու, ի՞նչ խնդիր կա այդտեղ, ո՞րն է ապօրինի գործողությունը: «Իրենց խողովակներով տվյալներ են ստացել: Դրանք վերաբերում են Հայաստանում տեղի ունենալիք ընտրություններին, եւ այս ինֆորմացիան հրապարակում են պրոֆիլակտիկ նպատակներով, որպեսզի հետագայում կարողանան կանխարգելել: Անկեղծ ասած, այս հայտարարությունից ես տպավորություն չստացա, որ խոսքը ՀՀ քաղաքացիների մասին է: Իրենք խոսում են, որ ենթադրյալ երկրի հատուկ ծառայություններն ազդեցություն են թողնում գործարարների վրա՝ բացի ֆինանսական աջակցություն ցուցաբերելուց, իրենց հետաքրքրող ուժերին աջակցելու նպատակով: Թե ինչ աջակցությունների մասին է խոսքը, չեն նշում»,- ասում է մեր զրուցակիցը: Սակայն Հայաստանում չկա օրենք, որն արգելում է նաեւ ֆինանսական աջակցությունը՝ նկատեցինք մենք: «Իհարկե, արգելված չէ, ենթադրում եմ, որ նկատի ունեն ստվերային ֆինանսավորումը: Կարծում եմ, որ ապագայում եւս կլինեն հայտարարություններ եւ գործողություններ՝ հաշվի առնելով տարածված հաշվետվությունն ու արդեն՝ նաեւ հաղորդագրությունը»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԲ ԻՐԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ԼՈՒԱԿՆԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՊԵՏՔ Է ՆՐԱ ՀԱՄԱՐ ՎՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ ԲԱՑԻ

*«Հրապարակի» զրուցակիցն է իրանցի քաղաքական վերլուծաբան **Փույա Հոսեյնին**:*

- Իրանի նոր առաջնորդն Ալի Խամենեիի որդին է, որը կորցրել է ընտանիքը՝ որդուն, կնոջը, հորը, քրոջը: Նրա նշանակումը բազմաթիվ քննարկումների առիթ տվեց:

- Այս պահին գտնվում ենք պատերազմի մեջ, որը շատ դաժան պատերազմ է, լինել եւ չլինելու հարց է Իրանի համար, եւ այդ պատերազմում ամենալավ ու ամենահարմար թեկնածուն, որ կարող էր հիմա Իրանի ուժայիններին, Իրանի քաղաքական ու ռազմաքաղաքական դաշտը համախմբել, նա է: Եթե այլ թեկնածուներ լինեին, կարող էին ինչ-որ տարաձայնություններ լինել, եւ այս պատերազմի, այս մասշտաբի մեջ դա շատ վտանգավոր կլիներ. կարող էր պառակտումների հանգեցնել Իրանի ներսում, որից կօգտվեր թշնամին: Հիմա շատ կարեւոր է, որ ներսում համախմբվածություն լինի, եւ լինի մեկը, որը կկարողանա շարունակել Ալի Խամենեիի գործը:

- Անդրադառնանք Մոջթաբա Խամենեիին. շատերը չգիտեն, որ նա պատերազմի բովով անցած է, լայն կապեր ունի թե՛ քաղաքական, թե՛ ռազմական շրջանակների հետ:

- Այո, հոր ժամանակ էլ նա շատ մեծ դեր է ունեցել եւ նույնպես համախմբող է եղել, շատ սերտ կապեր ունի հրամանատարների, ռազմական ղեկավարության, Իրանի ազգային անվտանգության եւ հոգեւորականների հետ: Նա բոլոր ոլորտներում մեծ հեղինակություն ունի եւ դրա համար է պատերազմի փուլում ամենահարմար թեկնածուն, որը կկարողանա համախմբել Իրանը եւ այդ պատերազմը շարունակել: Տարիներ շարունակ հոր կողքին է եղել եւ ավելի շատ է տիրապետում Իրանի ներքին ու արտաքին քաղաքականությանը, քան այլ թեկնածուներ, քանի որ այդ ամենի միջով անցել է, բոլոր նյուանսներին շատ լավ է տիրապետում:

- ԱՄՆ-ն եւ Իսրայելը հայտարարում են, որ ոչնչացված է Իրանի ռազմական ամբողջ ներուժը, հարվածել են նավթային գործարանի ռազմական ամբողջ ներուժը, հարվածել են նավթային գործարանին: Իրանցիներն ինչպե՞ս են գնահատում՝ ռեժիմի փոփոխությա՞ն, թե՞ այլ խնդիր է լուծվում:

- Նրանք ռեժիմի փոփոխության գաղափարախոսությունն առաջ են մղել, բայց նպատակը Իրանն իրենց վերահսկողության տակ պահելն է, Իրանը թուլացնելն է, իրենց դրածոյին իշխանության դնելը, որն իրենց համար կանխատեսելի ու վերահսկելի կլինի: Նրանք այդպիսի Իրան են ուզում: Երբ ասում են, որ ոչնչացրել են Իրանի ՀՕՊ-ը կամ ռազմական ուժերը, իհարկե, մենք պատերազմի մեջ ենք, եւ մեկը մյուսին հարվածներ է հասցնում, բայց նրանց հայտարարածը չի համապատասխանում իրականությանը, որովհետեւ Իրանն ինտենսիվ շարունակում է հարձակվել հակառակորդների վրա, պահպանում է հարձակման տեմպը: Նրանք նման հայտարարություն են անում, Իրանն էլ կարող է հայտարարել, որ ԱՄՆ-ի՝ Մերձավոր Արեւելքի բոլոր ռազմաբազաները շարքից դուրս են եկել, Իրանը կարողացել է հասնել բոլոր ռազմական օբյեկտներին, շատ մեծ վնասներ է հասցրել նաեւ Իսրայելին, եւ նրանք ելք չեն տեսնում՝ դուրս գալու այդ պատերազմից, որովհետեւ այլ բան էին նախատեսում. մտածում էին, որ Իրանի հոգեւոր առաջնորդին թիրախավորելուց անմիջապես հետո Իրանի համակարգը փլուզվելու է, սակայն պատերազմի 10-րդ օրն է, եւ ոչ մի թուլության նշան չենք տեսնում: Իհարկե, այդ մասշտաբի պատերազմի ժամանակ երկու կողմերի ռազմական հնարավորությունները մաշվում են. դա կա, բայց ԱՄՆ-ն նշում է, որ միայն Իրանի կողմից է դա տեղի ունենում, սակայն դա այդպես չէ, երկու կողմն էլ ունի այդ խնդիրը: Պետք է արձանագրենք, որ մյուս կողմը շատ մեծ ռազմական կորուստներ է ունեցել, Իրանը թիրախավորել է նաեւ ԱՄՆ-ի, Իսրայելի եւ Արեւմուտքի տնտեսական շահերը, նավթի հոսքը, նավթի տրանզիտ ճանապարհն է փակել, Հորմուզի նեղուցն է փակել, ինչի հետեւանքով նավթի գինը հատել է 110 դոլարի սահմանը: Եթե դա շարունակվի, ավելի կբարձրանա՝ մինչեւ 200 դոլար, եւ շատ մեծ վնասներ կհասցվի աշխարհի տնտեսությանը: Այսինքն՝ ոչ միայն ռազմական, այլեւ տնտեսական պատերազմ է մղվում Միացյալ Նահանգների, Իսրայելի, նրանց դաշնակիցների դեմ:

- Ուժային բալանսը, սակայն, հավասար չէ:

- ԱՄՆ-ն ու Իսրայելը միջուկային գերտերություններ են, ամենավերջին սերնդի զենքերն ունեն, բայց Իրանն իր ռազմարվեստով կարող է ինչ-որ չափով հավասարությունը պահել: Իրանը կռվում է 20 հազար դոլարանոց ԱԹՍ-ներով, Միացյալ Նահանգներն ու Իսրայելը դրանցից մեկը խփելու համար ծախսում են 1 միլիոն դոլար, այդպես Իրանը փորձում է հավասարեցնել անհավասար ռեսուրսները: Այսինքն՝ իրենք ավելի շատ ռեսուրս են ծախսում Իրանի դեմ: Իրանը տարիներ շարունակ այդ պատերազմին պատրաստվել է: Երկու կողմն էլ կորուստներ ունեն, եւ այդ կորուստները մեծ են: Ոչ ոք չի կարող կանխատեսել, թե այս պատերազմն ինչպես կավարտվի՝ Իրա՞նը կպարտվի, թե՞ հակառակ կողմը, բայց մի բան հստակ է. Իրանը 10-րդ օրում մեսիջ է ուղարկել նոր առաջնորդ նշանակելու պահով, որ մինչեւ վերջ գնալու է, եւ ռազմական ուժերն էլ շատ ոգեւորված են այս ընտրությունից, ու ոչ մի թուլության նշան չենք նկատում այսօր:

- Իրանի ռազմական ուժերը նախազգուշացրին Ադրբեջանին, հորդորեցին դուրս բերել սիոնիստական-ամերիկյան ուժերը: Իրանում ի՞նչ են մտածում՝ Իրանի համար դժվար պահին Ադրբեջանը կարո՞ղ է հարվածել Իրանին:

- Ադրբեջանն ինչ քայլ էլ փորձի անել, Իրանը զգուշացրել է: Բացի այդ, հայտարարել է, որ Նախիջեւանի դեպքերն Իրանի հետ կապ չունեն, իսկ Ադրբեջանի ղեկավարությունը շատ վատ պահեց իրեն՝ սպառնում էին Իրանին: Եվ դրանից հետո էր, որ Իրանի զինված ուժերը զգուշացրին Ադրբեջանին, որ շատ վտանգավոր հետեւանքներ կարող է ունենալ Ադրբեջանի վրա իրենց այդ պահվածքը, եւ վերջին անգամ զգուշացրին, որ սիոնիստական ռեժիմը՝ Իսրայելը, ակտիվություն ունի ձեր տարածքում, եւ պետք է դուրս բերել այդ ռեժիմի ներկայացուցիչներին Ադրբեջանից, որ ավելի շատ չվտանգեն իրենց ժողովրդին ու Իրանի անվտանգությունը: Դա վերջին զգուշացումն էր, ինչից հետո տեսանք, որ Ադրբեջանը զսպում է իր հռետորաբանությունը՝ Իրանի նախագահի հետ հեռախոսազրույցից հետո, ու այսօր էլ շնորհավորել է Իրանի նոր հոգեւոր առաջնորդին՝ ընտրության հետ կապված, եւ դա ցույց է տալիս, որ այդ զգուշացումը տեղ է հասել:

- ՀՀ իշխանություններն Ադրբեջանին ճանապարհ են առաջարկում, ԹՐԻՓ-ից բացի, Նախիջեւանի հետ կապ հաստատելու համար, այս քայլին Իրանն ինչպե՞ս կվերաբերվի:

- Ամեն դեպքում, Հայաստանն ու Իրանը տարածաշրջանում մի անվտանգային միջավայրի մեջ են, եւ պետք է նրանց քաղաքականությունը լրացնի մեկը մյուսին, որ կարողանանք այս տարածաշրջանում ունենալ իրական անվտանգություն եւ չեզոքացնել մեզ սպառնացող վտանգները: Եթե Իրանը ճանապարհը փակում է Ադրբեջանի համար եւ դրանով փորձում է զսպել նրանց քաղաքականությունը, այդ ռազմատենչ քաղաքականությունը, նրանց նկրտումները, որոնք հետագայում կարող են անդրադառնալ Հայաստանի վրա, շատ ագրեսիվ պահվածքը, եւ երբ Իրանը փորձում է լծակներ գործադրել Ադրբեջանի ուղղությամբ, Հայաստանը չպետք է Ադրբեջանին փրկության պատուհան բացի: Մեր երկու երկրների պաշտոնյաները պիտի ամեն ինչ համաձայնեցնեն, որովհետեւ մենք մի անվտանգային միջավայրում ենք եւ պետք է միասին պահպանենք կայունությունը տարածաշրջանում: Իրանն Ադրբեջանի վրա լծակներ ունի, պետք է այդ լծակները պահպանենք, որպեսզի կարողանանք զսպել Ադրբեջանին:

- Այսինքն, ՀՀ իշխանությունների առաջարկը զրկո՞ւմ է Իրանին՝ Ադրբեջանի նկատմամբ ունեցած լծակներից, ճի՞շտ եմ հասկանում:

- Թուլացնում է Իրանի դիրքերը, պետք է այնպես լինի, որ հաշվարկներն ավելի ուշադիր անեն, քայլերն ավելի զգույշ անեն, որ Իրանին չզրկեն կամ Իրանի դիրքերը չթուլացնեն տարածաշրջանում. վերջիվերջո, Իրանը շատ կարեւոր դեր ունի այս տարածաշրջանի՝ Հարավային Կովկասի անվտանգային համակարգի մեջ:

- Արդյոք ՀՀ իշխանությունները կանխատեսելի՞ են Իրանի համար:

- Հայաստանը փորձում է չեզոքություն պահպանել, բալանսավորված քաղաքականություն վարել, բայց մենք տեսնում ենք ոչ ճիշտ հաշվարկներ, քայլեր: Օրինակ, Ադրբեջանը հայտարարել էր, որ Նախիջեւանի վրա իբրեւ թե Իրանի հարձակումից հետո մի շարք երկրներ զանգահարել կամ մեսիջներ են հղել Ադրբեջանի ԱԳՆ-ին, իրենց զորակցությունն են հայտնել, որ Ադրբեջանի կողքին են կանգնում: Դա անտեղի էր, որովհետեւ Իրանը պաշտոնապես հայտարարել էր, որ չի հարվածել Նախիջեւանին: Երբ Իրանը հայտարարում է դա, ապա այդ բոլոր զորակցությունները զրոյանում են: Պետք է ավելի խոհեմ լինել, ավելի համբերատար, որպեսզի մեր երկու երկրների հարաբերություններին չվնասենք, բայց, ամեն դեպքում, հիմա Իրանը փորձում է բոլոր հարեւանների հետ պահպանել նորմալ հարաբերություններ: Նման բաներ լինում են, բայց հետագայում պիտի խուսափենք այդպիսի իրավիճակներից, որոնք կարող են ռիսկի ենթարկել մեր հարաբերությունները:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՀԵՆՑ ՓՈՂ Է ՊԵՏՔ, ՀԻՇՈՒՄ ԵՆ ՍԱՇԻԿԻՆ

ՀՀ երրորդ նախագահի եղբայր Սաշիկ Սարգսյանը ժամանակ առ ժամանակ հայտնվում է քրեական լրահոսում, ինչ-որ գումարներ վճարում, վնաս փոխհատուցում ու էլի անհետանում: Տպավորություն է, որ նրա դեմ մի ահռելի ինստիտուտ է աշխատում: Երեկ էլ Հակակոռուպցիոն դատարանը լուր տարածեց, թե Սաշիկ Սարգսյանին կալանավորելու որոշում է կայացվել. նա մեղադրվում է առանձնապես խոշոր չափերով վատնում կատարելու մեջ, երբ եղբայրը պաշտպանության նախարար էր: Մեղադրանքի համաձայն՝ նա 2001-2018 թթ. իրենց վստահված առանձնապես խոշոր չափերի պետական միջոցներ է հափշտակել՝ վատնելու եղանակով: Ինչ վատնում է դա, այն էլ՝ 17 տարի շարունակ, չեն ասում:

Աբսուրդն այն է, որ Սաշիկ Սարգսյանը երկրում չէ, եւ նրա գտնվելու վայրը հայտնի չլինելու պայմաններում քննարկելով կալանքի միջնորդությունը, որոշել են, որ բարձր է նրա կողմից փախուստի դիմելու ռիսկը, եւ կիրառել են կալանք՝ հետախուզում հայտարարելով: Սաշիկ Սարգսյանին մեղադրանք ներկայացվել է նաեւ 2019 թվականին, մեղադրում էին առանձնապես խոշոր չափերի խարդախության մեջ՝ Մարտիրոս Սարյանի գծանկարները հափշտակելու համար: Մեղադրանքը հանվեց հանցակազմի բացակայության հիմքով: Այն ժամանակ Սաշիկ Սարգսյանը 19 մլն 600 հազար դոլար նվիրաբերեց Արցախի պաշտպանության բանակին: Հարկերը չվճարելու գործ էլ է եղել, որով նրան քրեական հետապնդումից ազատել են՝ պետությանը 7.5 միլիոն դոլար վճարելուց հետո: Իսկ 2024-ին վարույթ են հարուցել ապօրինի ծագման գույքի առգրավման համար. «ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Ալեքսանդր Սարգսյանից եւ նրան փոխկապակցված անձանցից, հօգուտ ՀՀ-ի, բռնագանձել 14 անշարժ գույք, 8 շարժական գույք, 5 իրավաբանական անձանցում մասնակցություն, մոտ 6 մլրդ դրամ գումար»: Փոխկապակցված անձինք որդիներն են՝ Նարեկ եւ Հայկ Սարգսյանները, կինը՝ Ավրիգա Սարգսյանը, եւ որդու՝ Հայկ Սարգսյանի կինը: Տեսնես, հիմա՞ ինչքան են ուզելու Սաշիկից:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԿՏԻՎՈՒՄ

ՄԵՐ ԷՇ ԽԵԼՔՆ ԱՍԱ... ՓԱՍՏՈՐԵՆ

Տիկոլ Փաշինյանն իր կուսակցական ակտիվի հետ շարունակում է զվարճանալ մարզային ուղեւորություններով ու զվարճացնել հանրությանը, բայց դիտողի համար դա ոչ այնքան ուրախ զվարճանք է, որքան աբսուրդի թատրոն, որի հանդիսատեսն ենք ակամա ու պարտադրված:

Այս շրջիկ թատրոնի պրիմիտիվ թվաբանական հաշվարկը պարզ է. շատ միամիտ է պետք լինել՝ չհասկանալու համար, որ այս խումբը, հանուն ամեն քվեի, պատրաստ է տարբեր դերեր ստանձնել, դիմանալ, չարչարվել մի 100 օր եւս՝ հետո 5 տարի իշխանությունը վայելելու համար: Անգամ սեփական հովանոցը չբռնող, թիկնապահներով ու ավելի երիտասարդ, ջլապինդ տասնյակ կուսակիցներով շրջապատված վարչապետը երկու ձեռքով 2 ծանր տոպրակ խանութից բարձրացնում է, օգնում՝ արցախցի կնոջ առեւտուրը տեղ հասցնել: Կողքից քայլում են երկրորդ պլանի բազմաթիվ դերասաններ, ոչ ոք չի կիսում բեռը: Արդար, չարքաշ, բեռնակիր վարչապետը միայնակ տանում է տոպրակները, բարի ու հարեհաս՝ փրկում-օգնում է արցախցուն: Որքան հուզիչ տեսարան է սա եւ որքան կեղծավոր:

Այս երեսպաշտությունը 10:0 է անում բոլոր նրանց, ովքեր մտածում են, թե կարելի է ՔՊ-ի հետ պոպուլիզմի արենայում մենամարտի դուրս գալ եւ հաղթել նրանց, հաղթել նրանց դերասանական բարձր արվեստը, առանց ոսկորի լեզուն, հանուն նպատակի՝ ամեն ինչի ընդունակության ձիրքը:

Ո՛չ, պարոնայք, այս դաշտում նրանք անպարտելի են, որովհետեւ պատրաստ են նվաստանալ, իսկ մյուսները պատրաստ չեն, քանի որ ակնհայտ այդ վարքագիծը մովետոն է, անելու բան չէ: Մեկը մեկնաբանությունում գրել էր՝ «զիբիլ տվեք, թող տանի թափի», եւ դա չի թվում չափազանցություն: Եթե այդ կինը բերեր աղբի տոպրակը, ասեր՝ սիրելի վարչապետ, սա էլ ձեռքի հետ գցիր աղբամանը, նա դա էլ կաներ, հարեւանների դռներն էլ կծեծեր, կասեր՝ ինչ ունեք թափելու, տվեք՝ ձեռքի հետ տանեմ: Ինչ կա որ, մարդն օգնում է, ուզում է անձամբ օգնել, նա այս արարում ժողովրդի ծառան է՝ բառի ամենաուղիղ, ամենաիսկական ու ամենանվաստ իմաստով: Կանի, չի վարանի, մյուս այցին փորձեք՝ կհամոզվեք:

Բայց պետք է նկատել, որ այս կոմեդիան միատարր չէ, հստակ ունի տրագիկ արարներ, որտեղ նա թողնում է հեզ ու ծառայամիտ կերպարը, մեկ էլ անզուսպ բարկանում է՝ մեր էշ խելքն ասա, որ մանկապարտեզ ու դպրոց ենք կառուցել, ճանապարհ ենք վերանորոգել, նախկինների նման՝ չպիտի անեինք... Այս արարն էլ նրա համար է, որ ռամիկ մարդուն տեղ հասնի, թե, ախր, չեն գնահատում, էլի, իր անվերջ բարեգործությունը, իր օրոք եղած անուրանալի ձեռքբերումները, բայց չէ՞ որ իրենք արել են, իսկ, ահա, այդ նախկինները ոչինչ չեն արել: Այս միտքը պետք է մատուցվի համապատասխան էքսպրեսիայով, եւ բեմական կուլմինացիոն էքսպրեսիան օգնում է, որ հանդիսատեսն ավելի լավ հասկանա կերպարի զգացմունքներն ու ապրումները, չափազանց արդար ու բարի վրդովմունքը:

Ունեի՞ն արդյոք նախկիններն այսպիսի շնորհքներ: Ոչ, չունեին, այդ հարցում նրանք աչք զարնող անտաղանդ էին: Նախկինների ժամանակ էլ կառուցվել են մանկապարտեզ-դպրոց-ճանապարհներ, էլի ինչ ասես, մի ամբողջ Արցախ էր կառուցվում... նրանց էշ խելքն ասա, որ մի անգամ գոնե մեկի համար առեւտուրը տուն չհասցրին, հրապարակային չկերան, չծամեցին ոչ մի բան՝ ոչ մի պեռաշկի, ոչ մի կուկուռուզ, անգամ՝ մի սուջուխ: Եղան գոռոզամիտ, էլիտար՝ ինչ-որ, եւ հեռու մնացին պոպուլիզմից, որքան դա հնարավոր էր, այնքան հեռու, մինչեւ դժգոհ պոպուլյացիան ոտքի կանգնեց, մերժեց բոլոր նախկիններին միասին՝ անկախ նրանց արած եւ չարած գործերից, գործած եւ չգործած մեղքերից:

Պոպուլիզմի գլխավոր՝ «Ժողովուրդն» ընդդեմ «էլիտայի» բաժանարարը Փաշինյանը դրսեւորում է հնարավորինս դիտարժան. դուք՝ տեր, ես՝ ծառա, ասեք՝ կանեմ, ասեք՝ ինչ անեմ: Այս 3 ամսվա ընթացքում ամեն րոպե պետք է հասարակ, ռամիկ մարդը զգա, որ, ահա, այդպիսի մի ծառա ունի, ու ամեն գնով հունիսի 7-ին պահի այդ ծառային իր կողքին՝ որպես թագավոր: Բայց ո՞ր ասածն են արել, չէ՞ որ մի պահ ընտրողը նաեւ կարող է հիշել, որ ոչ թե ժողովրդի, այլ անգամ իրենք իրենց ասածները չեն արել ու ավելին՝ արել են իրենց բոլոր խոստումների հակառակը: Իսկ եթե 8 տարում կառուցվել են դպրոց-մանկապարտեզներ եւ ինչո՞ւ չպիտի կառուցվեին: Արդյո՞ք միայն պիտի ավիրվեր, կորսվեր, գերեվարվեր ու զոհվեր ամեն ինչ այդ 8 տարիներին:

Մի՞թե իշխանությունը միայն վայելքների համար է, իսկ աշխատանքը բարեգործությո՞ւն է: Մի՞թե մեկը պետք է շնորհակալություն հայտնի, որ մարդիկ գնացել են աշխատանքի, տնօրինել են բոլորիս հարկերից գոյացած բյուջեն, օգտվել են կառավարական բոլոր արտոնություններից, շրջագայել են, սկսել են հագնել լավ կոստյումներ ու ուտել ոչ միայն պեռաշկի, ամեն օր գնացել են պառլամենտ եւ կառավարություն՝ ինչպես հերանց տուն, արել են՝ ինչ ուզել են, ու խոսել են՝ ինչպես ուզել են, եւ, բացի այդ ամենից, պատկերացրեք, նաեւ ինչ-որ գործ են արել: Մի՞թե հենց աշխատելու համար չեն նրանք ընտրվել ու նշանակվել պաշտոնների, ստացել աշխատավարձ եւ ահռելի պարգեւավճարներ, մի՞թե նախկիններ ի ժամանակ ավելի ցածր ռոճիկով աշխատող պետական համակարգը չի արել ավելի շատ գործ՝ երբեք միլիոնավոր դրամների պարգեւավճարներ չստանալով հանդերձ: Մի՞թե նախկին պետական աշխատողները՝ վերից վար բոլորը կոռումպացված էին, իսկ այսօրվանները վարից վեր՝ գառան պես անմեղ: Մի՞թե: Եվ մի՞թե եթե անգամ այդպես է, ուրեմն չպիտի աշխատեին, առավոտյան 9-ից մինչեւ երեկոյան 6-ը, 8 տարի շարունակ ոչինչ պիտի արած չլինեին:

Եվ եթե ռամիկ մարդը լիներ նաեւ իմաստուն, կկշռեր՝ արդյո՞ք արված գործը բավարար է եւ համապատասխանում է ծախսված բյուջեին ու վատնված տարիներին, գուցե կարելի էր լինել ավելի արդյունավետ, եւ գուցե այդ թոշակը պետք է աճեր անցած տարիներին՝ 2 կամ 4 տարի առաջ, եւ ոչ թե ընտրություններից ընդամենը 3 ամիս առաջ:

Շնորհակալություն հայտնել չշտապենք, քանի որ մեզ խոստացված էր ավելին: Մենք տվեցինք մեր վստահության քվեն՝ այն ամենը, ինչ ունեինք, բայց չստացանք այն, ինչ մեզ խոստացել էին, կորցրինք, կոտրվեցինք, սգացինք ու չմխիթարվեցինք, մնացինք ծաղրված եւ չհասկացված... այսպես եւս կարող է մտածել ռամիկ, բայց իմաստուն ընտրողը: Եվ կմտածի՝ ընտրողը կհասնի այդ մտքին, քանի որ անհնար է օրեր շարունակ դիտել այդ աբսուրդի թատրոնը եւ մնալ չմտածող:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՄԻ ԽՈՒՄԲ «ԴՈՒԽՈՎ» ՀԱՅԵՐ ՄԵՐ ԱՌԱՋ ԵՆ ՊԱՏՆԵՇ ԴՆՈՒՄ, ՄԵՆՔ ԷԼ ԿԴՆԵՆՔ

ՀՀ իշխանությունների պահվածքը՝ «կուկուռուզ» ու «պեռաշկի» ուտել, փիառ ակցիաներ, պոպուլիստական քայլեր, հաշվարկված է ընտրազանգվածի այն խմբի վրա, որոնք իրենց նման են՝ ասում է Վրաստանի հայազգի գործիչ **Գուրգեն Մխիթարյանը**: «Այսինքն, այն մարդկանց, որոնց չի հետաքրքրում ո՛չ իրենց պետության ապագան, ո՛չ էլ աշխարհում սփռված հայ ազգի ճակատագիրը եւ ոչ միայն հայ ազգի. Հայաստանի քաղաքացիներ կան, որոնք էթնիկ հայեր չեն, օրինակ՝ եզդի ազգի ներկայացուցիչներ են, բայց շատ սրտացավությամբ են վերաբերվում Հայաստանում կատարվող բոլոր բացասական երեւույթներին: Եվ Հայաստանի Հանրապետությունը միայն ՀՀ-ում բնակվող հայերի հայրենիք չի կարելի համարել: Թեկուզ բազմազգ չէ Հայաստանը, բայց կան այնտեղ ազգային եւ կրոնական փոքրամասնություններ: Դա մեր եզդիներն են, ասորիները՝ Ասորի Հակոբիկ եկեղեցու հետեւորդները, ռուս մոլոկանները, փոքրաթիվ հունական համայնք ունենք Լոռիում: Նրանք՝ բոլորը, մեր երկրի լիիրավ տերերն են, ինչպես էթնիկ հայերը, որոնք բնակվում են դրսում»,- ասում է Մխիթարյանը:

Ինչ վերաբերում է Իրանի դեպքերին եւ ՀՀ իշխանությունների պոպուլիստական քայլերին, ապա դրանք խոսում են սեփական երկրի ճակատագրի հանդեպ անտարբերության մասին՝ նկատում է վրացահայ գործիչը: «Կոպիտ կինչի, բայց թքած ունեն ուղղակի պետության եւ համայն հայության վրա: Հայաստանի Հանրապետությունը՝ իր փոքրիկ տարածքով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, Մատենադարանով եւ Արցախի ինքնորոշման հարցով, ինչ-որ կոնսոլիդացնող ուժ էր, այդ առանցքի շուրջ էր կոնսոլիդացվում աշխարհասփյուռ հայությունը՝ եւ էթնիկ, եւ Հայաստանից այլ երկրներ տեղափոխված հայերը: Բայց եթե այսօր Հայաստանի ռազմաքաղաքական իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում վարկաբեկում են Մատենադարանը, գիտություն, մշակույթ, Արցախի հարց, Մայր Աթոռ, ապա ՀՀ-ն սոսկ որպես տարածք ինքն իրենից արդեն ոչինչ չի ներկայացնի 10 միլիոն աշխարհասփյուռ հայերի եւ ՀՀ-ից դուրս ապրող, բայց Հայաստանն իրենց հայրենիքը համարող ոչ էթնիկ հայերի համար»:

Վրացահայ գործիչը չի ուզում, որ Հայաստանում մի խումբ, այսպես կոչված, «դուխով» հայեր որոշեն ամբողջ 10 միլիոնանոց ժողովրդի ճակատագիրը: «Եթե ՀՀ-ն՝ իր քաղաքական իշխանություններով ու իր ընտրազանգվածով, հակադրվում է ոչ հայաստանաբնակ ժողովրդին, ովքեր Հայաստանը համարում են իրենց հայրենիքը կամ իրենց ինքնության պահպանման գրավականը, օրինակ՝ ինձ, թող բարի լինեն, հանգիստ թողնեն իմ ինքնության գրավականները՝ Մայր Աթոռը, ազգային արժեքները եւ ամեն ինչ: Իսկ եթե այդ ընտրազանգվածը, իր առաջնորդով, հակադրվում է ոչ հայաստանաբնակ մոտավորապես 10 միլիոն ժողովրդին, ապա ոչ հայաստանաբնակ հայերին ուրիշ ելք չեն թողնում ՀՀ իշխանությունները, եւ այդ գրպանային ընդդիմության՝ Արման Բաբաջանյան են, Դավիթ Ստեփանյան են, Լեւոն Շիրինյան են, ինչ են՝ դրանց նկատի ունեմ... ապա 10 միլիոնանոց ժողովուրդն էլ ուրիշ ելք չունի, նա էլ պիտի հակադրվի այդ ընտրազանգվածին եւ քաղաքական իշխանություններին, մինչեւ տեսնենք, թե ինչ է լինելու: Եթե մենք իրենց չհակադրվենք, դրանք ոչնչի դեմ կանգնող չեն»,- ասում է Մխիթարյանը:

Վրացահայ բժիշկը շեշտում է, որ այս խմբի գործողություններին պատասխանը պիտի սիմետրիկ լինի, անհրաժեշտ է հակադրվել ու հակազդել նրանց գործողություններին: «Նրանք չպետք է իրենց այդքան իրավունքներ վերապահեն: Հասկացանք, հայերն ապրում են տարբեր երկրներում, մի ստիպեք այդ մարդկանց՝ զոռով հրաժարվել ազգային պատկանելությունից, արդեն ստիպում են...»: Իսկ հակադրվել անհրաժեշտ է, եւ դրա համար Մխիթարյանն իր առաջարկն ունի. «Պետք է բոյկոտել բոլոր ՀՀ ներկայացուցչությունները՝ հյուպատոսարաններ կլինեն, թե դեսպանատներ: Պետք է բոյկոտել, արհամարհել, ոչ մի մշակութային միջոցառման չհրավիրել դեսպանատան ցանկացած աշխատակցի, հյուպատոսարանի ցանկացած աշխատողի մեկուսացնել: Իրենք մեզ են մեկուսացնում, մեր եւ Հայաստանի միջեւ են պատնեշներ դնում, մենք էլ իրենց առաջ պետք է պատնեշներ դնենք, թող մեկուսանան, ապրեն իրենց համար, ինչպես ուզում են: Հայաստանի Հանրապետության ներքին հարցերը՝ տարածքային կլինի, տնտեսական եւ այլն, պետք է որոշեն միայն եւ միայն ՀՀ քաղաքացիները: Օտար երկրներում բնակվող հայերը, օրինակ՝ ես, իրավունք չունեն խորհուրդներ տալ եւ կարծիք հայտնել, բայց ինչ վերաբերում է ազգային ինքնության պահպանմանը, ապա թող չփորձեն հակադրվել մեզ»:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՔՊ

ՓԱԿՎԱԾ ԵՎ ՓԱԿՎԵԼԻՔ ԷՋԵՐ

«Ենք փակել ենք… սոված, սննդի կարոտ թոշակառուի էջը Հայաստանում: Դա փաստ ա…»: Հասկացաք, չէ՞, որ սա ՀՀ ստախոս վարչապետի հայտարարություններից է: Ավելին ասեմ՝ նա այս հայտարարությունն անելիս Հայաստանի Հանրապետության պուճուր քարտեզի «բրոշկայով» էր, ինչը նշանակում է, որ Շիրակի մարզ կատարած «թափառայցի» օրերին է ասել: Մի քիչ էլ մանրամասնեմ… ՔՊ-ական թափառախմբակը երկար սեղանի շուրջ թեյ էր խմում, որ ստախոս վարչապետը, Պապիկյանի ու Սանոսյանի արանքում նստած, այս բանն ասաց: Իմ ֆեյսբուքյան էջում այդ կադրերը կան, կարող եք հենց հիմա էլ դիտել… Ռուբինյանը, Միրզոյան Արոն… Գրեթե բոլորը կան այդ կինոյում եւ համերաշխ՝ գլխով են անում, որ, այո, ՔՊ-ն փակել է սոված, սննդի կարոտ թոշակառուի էջը:

Մեկ էլ Բաքվում են այսպես հավաքվում, միասին «չայ» խմում ու էշ-էշ դուրս տալիս իմացած-չիմացած բաների մասին: Եղել եմ Բաքվում, գիտեմ: Մեր համալսարանի թիմով գնացել էինք մրցումների: Մեզ մի հանրակացարանում էին տեղավորել, որի առաջին հարկում «չայխանա» կար: Սրանք մեզ երեկոյան հրավիրեցին միասին չայ խմելու: Մեծ կապույտ թեյնիկներ կային… Դրին սեղանի գլխին, բաժակները շարեցին ու… Սկսվեց: Մի բաժակ խմեցի… Կողքիս նստածն իսկույն երկրորդը լցրեց, առանց որեւէ բան հարցնելու: Դա էլ խմեցի: Սա ձեռքը տարավ թեյնիկին որ երրորդը լցնի, հրաժարվեցի՝ շնորհակալ եմ, չեմ ուզում: Զգացի՝ նեղվեց… Դե, ուրեմն, բաժակդ շուռ տուր, որ իմանամ՝ չես ուզում: Տրադիցիա է: Սովետական ժամանակներ էին, եւ չայի սեղանի շուրջ էշ-էշ դուրս տվողներ քիչ կային: Իրենց համալսարանի մասին էին պատմում, իրենց քաղաքի, աշխատավոր ժողովրդի ու պարծենում, որ սաղ Սովետի նավթն իրենք են տալիս: Մենք էլ տակ չմնացինք… Ատոմակայան ունենք, ոսկի, մոլիբդեն, Սովետի ամենալավ կոնյակը…

Եվ, ուրեմն, «չայխանում» նստած, մի շրջան կազմած՝ չայ էին խմում ՔՊ-ի մեծերը եւ լսում ամենամեծի դուրս տված հիմարությունները: Տրադիցիա է… Չէ, ոչ միայն խմբակային «չայ» խմելը, այլեւ ՔՊ-ի ամենամեծին լսելն ու գլխով անելը: Բոլորը համամիտ էին, որ փակել են սոված, հացի կարոտ թոշակառուի էջը: Եվ սա՝ այն դեպքում, որ թոշակառուն այդ փրկության փրկոց 10 հազարը դեռ չի ստացել ու վստահ էլ չէ, որ կստանա: Մի խոսքով՝ տեսնենք, թե ինչ է լինելու, որովհետեւ մինչեւ ապրիլի 1-ը դեռ բավականին ժամանակ կա սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների գներն այնքան բարձրացնելու, որ ՔՊ-ի դրոշակին գրված այդ 10 հազարը դառնա ոչինչ: Հաջորդիվ սրանք «չայխանայում» այսպես փակելու են նաեւ առողջապահական ծառայությունների, գազի, լույսի, ջրի կարոտ թոշակառուների էջը:

Իսկ ինչո՞ւ եմ ասում, որ այս ամենն ավելին չէ, քան էշ-էշ դուրս տալը: Եկեք հիշենք, թե ՔՊ-ի ամենամեծն ուրիշ ինչ հայտարարություններ է արել՝ տարատեսակ էջեր փակելու մասին: Ստեփանակերտում էշ-էշ հայտարարեց, որ Արցախի պատկանելության էջը փակված է՝ «Արցախը Հայաստան է, եւ վերջ»: Ավելի ուշ, երբ հրավիրել էին Պրահայում «չայ» խմելու, նոր հայտարարություն արեց. «Արցախն Ադրբեջան է, եւ վերջ»: Ի՞նչ իմանամ, գուցե «չայի» սեղանն է վատ ազդում այս մարդու վրա: Մարտի 1-ի «անմեղ զոհերի» ընտանիքներին մի քանի միլիոն փող տվեց ու հայտարարեց՝ վերջ, մարտի 1-ի գործն ըստ էության եւ ամբողջությամբ բացահայտված է: Իբր՝ հարցը փակված է: Ու մեկը չկա, որ հարցնի՝ եթե այդ էջը փակված է, դու ինչո՞ւ ես դրսում: Այդ օրերի բոլոր տեսանյութերն ու արածդ կոչերը քո դեմ են խոսում, ախր…

Մի առիթով էլ, թե՝ մեր երկրում օլիգարխների էջը փակված է, բոլորը դարձել են բարեխիղճ հարկատուներ: Շուրջներդ նայեք մի հատ… Շունը պոչը ոնց շարժում է, ՔՊ-շնիկ օլիգարխի է դիպչում: Ինչքան ԱԺ-ում են, երկու այդքան՝ կառավարությունում: Տենդեր շահելն էլ են դարձրել ՔՊ-շնիկների կամ նրանց հետ ասոցացվող գործարարների մենաշնորհ: Ներմուծման-արտահանման ոլորտում բարգավաճող օլիգարխների մասին էլ չեմ խոսում:

Կոռուպցիայի էջը փակելու մասին չմոռանամ ասել: Մի ժամանակ այնպես էին փակել այդ էջը, որ կոռուպցիան անվերադարձ փախել էր մեր երկրից: Տառացիորեն մեկ ամիս առաջ ՊԵԿ-ում շռնդալից բաներ տեղի ունեցան, ստեպ-ստեպ ՊՆ-ում են բաներ բացվում, անցյալ օրն էլ Մանկավարժական համալսարանում էր «բռնոցի»: Սա ամբողջ ցանկը չէ, իհարկե, բայց վկայում է այն մասին, որ մեր երկրում կոռուպցիա, այնուամենայնիվ, կա եւ՝ շատ: Չբզբզեմ, չէ՞, թե ինչպես են մարդիկ ՔՊ ցուցակ խցկվում: Մուծվիր եւ խցկվիր, ավելի շատ մուծիր եւ ավելի խորը խցկվիր, այսինքն՝ առաջին կամ երկրորդ տասնյակ… Ամեն ինչ շատ պարզ է:

Եվ, իհարկե, չեմ կարող չխոսել ՔՊ ռահվիրայի ամենաաղաղակող հայտարարության մասին: Մի տեղ «չայ» խմելուց է ասել. «Մեր երկրում ընտրակեղծիքների էջը փակված է»: Ըղձրթ… Դուք որ ընտրակեղծիք չանեք, կարո՞ղ եք գոնե ԺԷԿ-ի պետ ընտրվել: Ինձ մեկ հատիկ ՔՊ-շնիկ ցույց տվեք, որի հանրային գործակիցը բացասական թիվ չէ: Սկսեք ամենամեծ ՔՊ-շնիկից: Բոլորիդ ճակատին մեծ-մեծ տառերով դաջված է՝ դավաճան, հողատու, կապիտուլյանտ, օտարի գործակալ, անհավատ, տիրադավ, պառակտիչ, ստախոս… Միով բանիվ՝ ԱՆԴՈՆ: Եվ դուք ասում եք, որ կարող եք արդար ընտրություններով ընտրվե՞լ: Ո՞ւմ եք խաբում, ի՞նձ: Ես ձեր կաշին դաբաղխանից գիտեմ, ախր: Դուք ամեն ինչ անելու եք, որ վերարտադրվեք վարչապետի աթոռին եւ արդարացնեք ձեր օտար տերերի սպասելիքները: Սկսած լույսերն անջատելուց եւ վերջացրած ավտոբուսներով «ընտրողների» շրջիկ խմբեր պտտելով: Երաշխիք կա՞, որ բանակն ու ոստիկանությունը հրամանով չեն ընտրելու: Դատախազություն, ԱԱԾ, ՊԵԿ, նախարարություններ, կրթական հաստատություններ, ԲԿ-ներ, հրաշքով ողջ մնացած ստեղծագործական միություններ ու գրանտակեր ՀԿ-ներ… Ինչի՞ համար է այս մոբիլիզացիան, եթե ոչ ընտրություններն ամենաբարձր մակարդակով կեղծելու եւ հետո ժողովրդին հիմարացնելու, թե ձեզ ժողովուրդն է ընտրել:

Այս անգամ չի ստացվելու, պարոնայք ՔՊ-շնիկներ: Կարող եք հանգիստ խղճով զեկուցել ձեր տերերին, որ վիճակը «ճանտռակուլի» է, եւ առանց ընտրակեղծիքների չեք կարողանալու շեֆին պահել վարչապետի աթոռին: Ասեք, որ ձեզ ընտրակեղծարարության նոր, Հայաստանում դեռ չտեսնված գործիքներ ու մեթոդներ են պետք, շատ փող եւ շռնդալից միջոցառումներ… Տեսեք՝ չուշանաք:

Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես ընտրելու եմ այնպիսի իշխանություն, որ գա ու Հայաստանում առաջինը փակի Էրդողանի, Քըլըչի, Ալիեւի եւ ՔՊ-ի կոալիցիոն գարշահոտության էջը, էշ-էշ ճամարտակելու էջը, ժողովրդի ու ազգի պառակտվածության էջը, խեղճության, թուլության, անապահովության զգացողությունների էջը: Ես մերժելու եմ մահվան իշխանությունը, որ ստեղծագործ աշխատանքը, ապահով կյանքն ու արժանապատիվ խաղաղությունը վերջապես մտնեն մեր տուն:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԼՐԱԳՐՈՂԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՆ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ Է

2023 թ. օգոստոսի 24-ին լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանը հայցադիմում էր ներկայացրել դատարան՝ ընդդեմ Խաժակ Թանանյանի՝ հրապարակային արտահայտված վիրավորանքից պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու պահանջի մասին: 1959թ. ծնված Խաժակ Թանանյանն Իջեւան քաղաքի բնակիչ է, քաղաքի կենտրոնում սրճարան ունի, նախկինում եղել է ՀՅԴ անդամ, այժմ խիստ իշխանամետ է՝ «նիկոլական»:

2023թ. սեպտեմբերի 8-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հայցադիմումը վարույթ է ընդունել: Այդ գործով կայացել են նախնական դատական նիստեր: Քաղաքացիական հայցը քննող դատավոր Սարգիս Արմենակյանը գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր է համարել այն, որ Facebook սոցիալական ցանցից արտատպված թղթային լուսանկարի՝ «Խաժակ Թանանյան» անունով օգտատերը Facebook սոցիալական ցանցի իր էջում Հռիփսիմե Ջեբեջյանի հասցեին՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2023 թվականի հուլիսի 25-ի ասուլիսից հետո վիրավորական արտահայտություններով 2 գրառում է արել:

2024թ. հուլիսի 10-ին Իջեւանում կայացած դատական նիստում դատավոր Սարգիս Արմենակյանը վճռել է Հռիփսիմե Ջեբեջյանի՝ ընդդեմ Խաժակ Թանանյանի՝ հրապարակային արտահայտված վիրավորանքից պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու պահանջի մասին հայցը բավարարել, պարտավորեցնել պատասխանող Խաժակ Թանանյանին՝ հրապարակայնորեն, համացանցային www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով ներողություն խնդրել հայցվոր Հռիփսիմե Ջեբեջյանից՝ հետեւյալ բովանդակությամբ. «Խաժակ Թանանյանս ներողություն եմ խնդրում Հռիփսիմե Հակոբի Ջեբեջյանից՝ «լիրբ» եւ «պոռնիկ» վիրավորական արտահայտությունների համար», եւ Խաժակ Ռազմիկի Թանանյանից, հօգուտ Հռիփսիմե Ջեբեջյանի, բռնագանձել 400 հազար ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի փոխհատուցում: Խաժակ Թանանյանից, հօգուտ Հռիփսիմե Հակոբի Ջեբեջյանի, բռնագանձել նաեւ 200 հազար ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Խաժակ Թանանյանն այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ դատավոր Նարեկ Գաբրիելյանի նախագահությամբ, 2025թ. փետրվարի 28-ին որոշել է Խաժակ Թանանյանի վերաքննիչ բողոքը բավարարել, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2024 թ. հուլիսի 10-ին կայացված վճիռը բեկանել է եւ գործն ամբողջ ծավալով ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության: 2026թ. փետրվարի 17-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վարդուհի Գեւորգյանը Դիլիջանում կայացած դատական նիստում որոշել է, ըստ հայցի Հռիփսիմե Հակոբի Ջեբեջյանի՝ ընդդեմ Խաժակ Ռազմիկի Թանանյանի՝ հրապարակային արտահայտված վիրավորանքից պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու պահանջի մասին քաղաքացիական գործն ընդունել վարույթ եւ նշանակել դատական նիստ՝ 2026 թ. մարտի 19-ին, ժամը 12:00-ին, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Դիլիջանի նստավայրում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ֆեոդալական ժողովրդավարություն

Առաջ կպոռանք, ետ կվազենք:

Ինչ կգրեր եւ ինչպես կգրեր մեծ երգիծաբանը, եթե մի պահ գլուխը վեր բարձրացներ եւ խելապատառ լինելու փոխարեն մի պահ կանգ առներ, շուրջը նայեր ու փորձեր գլուխ հանել չորս կողմը կատարվածից: Ժամանակն ինքնըստինքյան առաջ պիտի մղվեր, բայց պարզվում է, որ հայտնվել ենք վաղ ֆեոդալական բարքերի տիրույթում:

Ասում ենք ժողովրդավարություն, որտեղ բոլոր աստիճանակարգերում հասարակական հարաբերությունների որոշիչը պիտի որ լինի օրենքը, որին, սակայն, փոխարինելու է եկել… քծնանքը: Քծնում է, սակայն ոչ միայն շարքային աշխատավորը, որն իր տիրոջից մի կտոր հաց, եթե կուզեք՝ նաեւ պանիր է ակնկալում, այլ նաեւ… տերը, որն աշխատավորից մի ձայն, մի քվե է մուրում, որ իր հարստության աղբյուրը հանկարծ չկտրվի (նոր ժամանակներ, նոր բարքեր):

Նախընտրական բուռն օրեր են, Սոդոմ Գոմոր: Ամեն ինչ խառնվել է իրար, եւ հնարավոր չէ տարբերել՝ ով է տերը, ով է ծառան, ով է առեւտրականը, ով է բեռնակիրը:

Նախընտրական քաոս, որն ավարտ չունի: Բարեկրթության, հանդուրժողականության թեզերը ձուլվել են հայհոյախոսության թանձրույթին (այս մրցասպարեզում, թող կանայք ներեն, կանանց բանակն անմրցելի է):

Քարոզարշավը, որ դեռ սկսված չպիտի լիներ, շարունակվում է ողջ թափով: Շարունակվում է ուրախ (սայլի) ավտոբուս պիտի գրեի, ռաբիս երգերի, ծափուծիծաղի, քծնանքի տեսքով…

Իսկ օդում պտտվում են քամիները՝ հյուսիսային, հարավային, եվրոպական, ամերիկյան: Քամիներն այսօր պտտվում են, մինչդեռ վաղը դրանք կարող են ավերիչ հողմերի վերածվել…

ՀԳ. *Քծնանքը պատվելի չէ, բայց որպեսզի այն հավասարակշռված լինի, վատ չի լինի, եթե համապետական ընտրությունները Թրամփի առաջարկով անցկացվեն ոչ թե չորս, հինգ տարին մեկ, այլ՝ տարին մեկ անգամ… (ի վերջո, աշխարհի ճակատագիրը սկսել է որոշել Թրամփը):*

Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՑԱՅԼԵՆ

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԴՈՎԵՂ ՄՏՆՈՂ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ՝ ԿԻՍԱՓԼՎԱԾ, ԴՊՐՈՑԸ՝ ԿԻՍԱՏ

Մարտի 1-ին Նոյեմբերյան քաղաքի կենտրոնում, Երեւանյան փողոցում Դովեղ գյուղի բնակչուհի Գայանե Ամիրաղյանը մոտեցավ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու ասաց, որ խնդրանքով է դիմում նրան՝ Դովեղ գյուղի ճանապարհի հարցով: Ասաց, որ գյուղի դպրոցի նոր շենքի շինարարության ընթացքում սահմանամերձ գյուղ տանող ճանապարհը մասամբ փլվել է: Նիկոլ Փաշինյանը խնդրին անտեղյակ էր, հարցրեց իր կողքին գտնվող Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, ապա ասաց. «Մի րոպե, նախ՝ դպրոցի կառուցումը գնում ա»: Դովեղի բնակչուհին հակադարձեց. «Չի գնում, դադարեցված ա»: Մարզպետը պարզաբանեց. «Դպրոցի կառուցումն ընթացքի մեջ ա, վերջնական որոշակի տեխնիկական խնդիրներ են եղել, դատական պրոցես է եղել»: Բնակչուհին մարզպետին հարցրեց. «Իսկ տեսե՞լ եք պատը, հիմա այդ պատը ճաքել է»: Մարզպետն արձագանքեց. «Մայրիկ ջան, այնտեղ տեխնիկական խնդիր ա առաջացել տեխհսկիչի հետ, շինարարությունը կվերսկսվի, դպրոցի ճանապարհը, կոնկրետ նախագիծ-նախահաշիվը պատրաստ ա»: Դովեղի բնակչուհին շարունակեց. «Ուրախ կլինեմ, որ դպրոցը շատ շուտ ավարտվի: Բայց համար առաջինը մեր գյուղի ճանապարհն է պետք, որովհետեւ մենք այլընտրանքային էլ չունենք: Եթե ինչ-որ մի բան էլ լինի, Դովեղն այլընտրանքային ճանապարհ չունի»: Մարզպետ Ղալումյանն ասաց, որ Դովեղին լավ ծանոթ է, 10 անգամ եղել է Դովեղում՝ դպրոցի համար, ճանապարհի նախագիծ-նախահաշիվը պատրաստ է:

Ապա Փաշինյանը պարզաբանեց. «Շատ տեղեր կան, որ մենք դպրոցի կառուցում ենք սկսել, մրցույթ ա եղել, մրցույթի հաղթող ա եղել, բայց շինարարը գալիս, հաղթում ա, հետո իր պարտավորությունը չի կատարում»: Փաշինյանի ներկայացրած իրավիճակի մեջ կա կառավարության եւ քաղաքաշինության կոմիտեի մեղքը:

Այժմ՝ Դովեղի դպրոցի շինարարության ոդիսականի մասին: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը սկսվել է 2022թ. վերջին, շինարարության ավարտի ժամկետի երկարաձգումից հետո այն պետք է ավարտվեր 2024 թ. հունիսի կեսին: Դպրոցի շենքը կառուցվում էր պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 1 միլիարդ 218 միլիոն դրամով, շինարարությունն իրականացնում էր «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն, սակայն աշխատանքների մի մասն է արված: 2024թ. գարնանը մի քանի ամիս դադարեցվել էր դպրոցի շինարարությունը, տեղացի բանվորները, աշխատավարձի ուշացման պատճառով, դուրս եկան գործից: Տեղացի բանվորներին փոխարինեցին հնդիկ բանվորներ, ապա՝ արաբներ: Քաղաքաշինություն կոմիտեն 2025թ. փետրվարին միակողմանի լուծել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը: Քաղշինից պարզաբանել են, որ «Կանժիլստրոյը» շինարարական աշխատանքները կատարել է ժամկետների խախտումներով եւ որակի շեղումներով: Բացի այդ, չի ներկայացրել պայմանագրով պահանջված փաստաթղթերը: Պայմանագիրը միակողմանի խզելուց հետո «Կանժիլստրոյ» ընկերությունը դիմել է դատարան, 2025թ. ապրիլին դատարանը մերժել է նրա պահանջը: Մինչ այդ կատարված աշխատանքների համար «Կանժիլստրոյին» վճարվել է շուրջ 266 միլիոն դրամ: «Կանժիլստրոյի» հետ կնքված պայմանագիրը դադարեցնելուց հետո դպրոցի շենքի կառուցումը շարունակելու համար 2025թ. մայիսին երկու անգամ հրատապ բաց մրցույթներ են հայտարարվել, որոնք, սակայն, չեն կայացել, որովհետեւ մասնակից չի եղել: 2025թ. հունիսին առանց մրցույթի՝ մեկ անձից գնման միջոցով պայմանագիր է կնքվել նոր կապալառուի՝ «Պրոմ գրուպ» ՍՊԸ-ի հետ, որը, ըստ պայմանագրի, պարտավորվել է կատարել Դովեղի դպրոցի շինարարության մնացորդային աշխատանքները: Գնման հրավերով այդ աշխատանքների իրականացման համար սահմանված գինը կազմել է 1 միլիարդ 55 միլիոն դրամ, սակայն շինարարական կազմակերպությունն առաջարկել է 985 մլն դրամ, պայմանագիրը կնքվել է կապալառուի առաջարկած գումարով: Աշխատանքներն ավարտելու համար այդ կազմակերպությանը տրվել է 365 օրացուցային օր ժամկետ:

2025թ. դեկտեմբերի 24-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել, թե երբ է ավարտվելու Դովեղի դպրոցի շինարարությունը: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ շինարարությունն ավարտվելու է 2026թ. օգոստոսին: Դպրոցի շինարարությունն այժմ դադարեցված է, Դովեղից հայտնեցին, որ շինկազմակերպության բրիգադը մեկնել է Դովեղից, փոխարինող բրիգադն էլ դեռ չի ժամանել: Քիչ հավանական է, որ մի քանի ամիս հետո՝ հունիսին կամ օգոստոսին, Դովեղի դպրոցի նոր շենքի շինարարությունն ավարտված, դրան կից՝ Դովեղ մտնող ճանապարհն էլ վերականգնված, վերակառուցված կլինի:

ՀԳ. *Ի դեպ, հատկապես դպրոցների շինարարական տենդերների հետ կապված՝ շատ վատ ավանդույթներ են ձեւավորվել այս իշխանության ժամանակ. քաղշինն ու տարբեր կառույցներ ամեն կերպ խոչընդոտում են շինաշխատանքների իրականացմանը: Ասենք՝ միջանկյալ նախագծերի հաստատումն այնքան են ուշացնում, որ կազմակերպություններն ակամայից խախտում են ժամկետները, ապա հենց այդ ժամկետների խախտման հիմքով էլ դադարեցնում են նրանց հետ պայմանագրերը, տույժ-տուգանքներ կիրառում, չեն վճարում կատարված աշխատանքների դիմաց, հետո նոր տենդերներ են հայտարարում կամ մեկ անձից գնումով պայմանագիր կնքում եւ շատ ավելի մեծ թվերով պայմանագրեր կնքում նոր կազմակերպությունների հետ՝ մեծ վնասներ պատճառելով պետբյուջեին եւ վախեցնելով տենդերների մասնակցող շինկազմակերպությունների աչքը:*

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ»՝ ԲՈՆԴԱՐՉՈՒԿԻՑ ՄԻՆՉԵՎ BBC

Ռուս մեծ գրող Լեւ Տոլստոյի «Պատերազմ եւ խաղաղություն» վեպը համաշխարհային գրականության ամենանշանակալի գործերից է: Դա մեծակտավ պատմափիլիսոփայական գեղարվեստական ստեղծագործություն է, որը մշտապես եղել է կինոգործիչների ուշադրության կենտրոնում եւ շատ է էկրանավորվել: Նրա հերոսների, նրանց ճակատագրերի եւ ժամանակի պատմական իրադարձությունների միջոցով հեղինակը փորձել է ներկայացնել պատերազմի, խաղաղության եւ սիրո փիլիսոփայությունը: Վեպի առաջին էկրանավորումներից մեկը 1956 թվականինն է: Խոսքը Քինգ Վիդորի «Պատերազմ եւ խաղաղություն» ամերիկյան կինոնկարի մասին է, որտեղ Օդրի Հեփբյորնը Նատաշա Ռոստովայի դերն է կատարել, Հենրի Ֆոնդը՝ Պյեր Բեզուխովի: Դա մեծածավալ հոլիվուդյան նախագիծ է, աչքի է ընկնում ճոխ կոստյումներով եւ դեկորացիաներով: Սակայն վեպի սյուժեն կինոնկարում զգալիորեն կրճատվել է, եւ հիմնական շեշտը դրվել է սիրային գծի ու հերոսների ճակատագրերի վրա:

Ստեղծագործության ոգուն ամենահարազատն ու ամենամաշտաբայինը, ըստ մասնագետների, խորհրդային ռեժիսոր Սերգեյ Բոնդարչուկի նկարահանած «Պատերազմ եւ խաղաղությունն» է: Այն վիթխարի նախագիծ է, որը նկարահանել է «Մոսֆիլմը»՝ 1966-67 թթ.՝ 4 սերիայից բաղկացած: Բոնդարչուկի էկրանավորումն աչքի է ընկնում աննախադեպ ծավալայնությամբ: Միայն ճակատամարտերի տեսարաններում ներգրավված է եղել խորհրդային բանակի հազար զինվոր: Կիրառվել են բարդ օպերատորական հնարքներ, շատ տեսարաններ նկարահանվել են իրական պատմական վայրերում: Բոնդարչուկը՝ ինքը, խաղացել է Պյեր Բեզուխովի դերը: Նատաշա Ռոստովայի կերպարը մարմնավորել է Լյուդմիլա Սավելեւան, իշխան Անդրեյ Բոլկոնսկու կերպարում հանդես է եկել Վյաչեսլավ Տիխոնովը: Կինոնկարը ձեռք բերեց համաշխարհային հռչակ, արժանացավ «Օսկարի»՝ 1969 թվականին: Այն մինչ այժմ համարվում է Տոլստոյի վեպի էտալոնային էկրանավորումը:

21-րդ դարում «Պատերազմ եւ խաղաղություն»-ը նորից գրավում է կինոգործիչների ուշադրությունը: 2007-ին ստեղծվել է վեպի եվրոպական սերիալային տարբերակը, որտեղ փորձել են ավելի մանրամասն ներկայացնել գրքի սյուժետային կառուցվածքը: Հատկապես ուշագրավ է վեպի բրիտանական ադապտացված էկրանավորումը՝ BBC-ի կողմից: Սցենարը գրել է բրիտանացի դրամատուրգ Էնդրյու Դեւիսը, հանդես են եկել Լիլի Ջեյմսը, Պոլ Դանոն, Ջեյմս Նորթոնը: Բազմասերիանոց ֆորմատը թույլ է տալիս ավելի մանրակրկիտ ներկայացնել կերպարներին ու ցույց տալ վեպի բազմաթիվ սյուժետային գծերը:

Այս ամենով հանդերձ, «Պատերազմ եւ խաղաղություն»-ն ունի էկրանավորման մի շատ կարեւոր դժվարություն՝ վեպի մեծածավալ լինելը, ավելի քան 500 վիպական պերսոնաժներին կինոնկարում արտացոլելը, պատմական ընդարձակ ժամանակաշրջանը՝ նապոլեոնյան պատերազմների շրջանը, ինչպես նաեւ՝ 1812 թվականի ռուս-ֆրանսիական պատերազմը: Որեւէ ռեժիսոր, որը պետք է էկրանավորի այն, այս ամենը պետք է հաշվի առնի: Ի դեպ, Բոնդարչուկի էկրանավորումը սովետական կինոյի ամենաթանկ նախագիծն է եղել, որը, ըստ նախահաշվային սմետայի, արժեցել է 18 միլիոն ռուբլի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆ ԷԼ ԵՆ ՄԱԾՈՒԿ ՏԱՐԱԾՈՒՄ, ՈՐ ԻՐԵՆՑ ՏԵՐԵՐԸ ՉՏԵՍՆԵՆ



Մարտի 9-ին որոշ լրատվամիջոցներ տեղեկություն տարածեցին, ըստ որի՝ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանն իբրեւ թե շնորհավորել է Իրանի Իսլամական Հանրապետության Գերագույն առաջնորդ ընտրված այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեիին: Ինչու ենք գրում «իբրեւ թե», որովհետեւ շատ հնարավոր է, որ այդպիսի շնորհավորանք ընդհանրապես չի էլ եղել, իսկ եթե եղել է, ապա դա ամենեւին էլ շնորհավորանք չի կարելի համարել:

Որտեղի՞ց են վերցրել շնորհավորանքի տեքստը՝ այն տարածած լրատվամիջոցները, ո՞վ է նրանց տրամադրել դրա տեքստը, ո՞ր աղբյուրին են հղում անում: Փորձենք պարզել, թե արդյոք այդ շնորհավորանքն իրա՞կան է, թե՞ ֆեյք՝ գոյություն չունեցող: Նիկոլ Փաշինյանն ունի պաշտոնական էլեկտրոնային էջ՝ https://www.primeminister.am: Մտնում ենք այդ էջը, եւ, ըստ տրամաբանության, այդ էջում պետք է տեղադրված լինի շնորհավորանքի տեքստը: Բայց մարտի 9-ի լրահոսի մեջ ոչ մի շնորհավորանքի տեքստ չկա, կա տեղեկություն, որ նա մասնակցել է Անտոնիու Կոշտայի եւ Ուրսուլա ֆոն դեր Լայենի նախաձեռնած հեռավար հանդիպմանը, եւ մի տեղեկություն էլ այն մասին, որ այդ օրը տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի նիստ, որն ինքն էլ նախագահել է: Կա նաեւ կառավարության պաշտոնական էլեկտրոնային էջ https://www.gov.am, մտածեցինք՝ գուցե այնտեղ կարող է տեղադրված լինել այդ շնորհավորանքի տեքստը, բայց այդ էջի լրահոսի վերջին տեղեկությունը մարտի 5-ին փոխվարչապետ Միեր Գրիգորյանի կողմից «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրենի առաջին տեղակալի հանդիպման մասին է: Ուրիշ ոչ մի տեղեկություն, շնորհավորանքի տեքստ չկա: Մտածեցինք՝ գուցե Փաշինյանի ֆեյսբուքյան էջում՝ https://www.facebook.com/nikol.pashinyan, կհաջողվի գտնել Իրանի Իսլամական Հանրապետության Գերագույն առաջնորդ ընտրված այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեիին ուղղված շնորհավորանքի տեքստը: Բայց մարտի 9-ի լրահոսը սկսվում է քաղաքացիներին բարի օր մաղթելով եւ սրտիկելով, հետո տեղեկություն՝ Անվտանգության խորհրդի նիստի մասին, հետո էլ, թե մասնակցել է Կառավարման ակադեմիայի երկրորդ դասին, իբրեւ թե կրթվում է: Իսկ շնորհավորանքի տեքստը չկա ու չկա:

Ենթադրենք, թե շնորհավորանքը եղել է, ասենք՝ Փաշինյանի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանն է այդ տեքստն ուղարկել լրատվամիջոցներին եւ ասել, որ դա վարչապետի շնորհավորանքի տեքստն է: Բայց նույնիսկ այդ դեպքում, այն ոչ մի կերպ չի կարելի համարել շնորհավորանք, բացառությամբ նրա, որ տեքստում կա «շնորհավորում եմ» բառակապակցությունը: Ահա թե ինչ է ասվում վարչապետի շնորհավորանքի այդ տեքստում. «Շնորհավորում եմ Ձեզ՝ Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդի պաշտոնում ընտրվելու առիթով: Վստահ եմ, որ Հայաստանի եւ Իրանի միջեւ ամուր կապերը կշարունակեն զարգանալ՝ գրանցելով նոր հաջողություններ: Առիթը պատեհ համարելով՝ Իրանի բարեկամ ժողովրդին մաղթում եմ բարօրություն եւ հարատեւ խաղաղություն»:

Նախ, Փաշինյանը կամ տեքստի հեղինակը չի գրում, թե ում է ուղղված շնորհավորանքը. չկան անուն, ազգանուն, կարող էր, չէ՞, գրել՝ մեծարգո այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեի, ընդունեք իմ ջերմ շնորհավորանքը, որովհետեւ եթե չկան անուն, ազգանուն, հայտնի չէ, թե ում է այն ուղղված: Երկրորդ շնորհավորանքի հեղինակը խեղաթյուրում է նրա զբաղեցրած պաշտոնը՝ այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեին ընտրվել է Իրանի Իսլամական Հանրապետության Գերագույն առաջնորդ եւ ոչ թե Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ, ինչպես գրված է Փաշինյանի տարածած տեքստում: Ստացվում է՝ հայտնի չէ, թե ում է նա շնորհավորել կամ ինչի համար:

Բացի այդ, շնորհավորանքի տեքստում ոչ մի բարեմաղթանք չկա՝ ուղղված անձամբ այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեիին: Տեքստի հեղինակը գիտի, որ սպանվել է ԻԻՀ Գերագույն առաջնորդի հայրը՝ Ալի Խամենեին, եւ կարող էր նրան մաղթել, որ նա հաջողությամբ շարունակի հոր սկսած գործը: Հեղինակն առնվազն պետք է տեղյակ լիներ, որ այս օրերին Իրանը եւ Իրանի ժողովուրդը դիմագրավում են ամերիկա-իսրայելական ագրեսիային: Կարող էր ագրեսիայի մասին չգրել, կարող էր երկրների անուններ չտալ, դա Փաշինյանի կողմից սխրագործություն կլիներ, ինչը մենք չենք կարող ակնկալել, բայց գոնե կարող էր գրել՝ վստահ եմ, որ բարեկամ Իրանի ժողովուրդը՝ Ձեր առաջնորդությամբ, կդրսեւորի տոկունություն եւ քաջություն, կպաշտպանի իր երկրի անկախությունն ու տարածքային ամբողջականությունը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ԻԻՀ Գերագույն առաջնորդ այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեիին ուղղված շնորհավորանքի պաշտոնական տեքստ, ըստ էության, գոյություն չունի: Փաշինյանը ցանկացած պահի կարող է ասել, որ ինքը որեւէ մեկին չի շնորհավորել, եւ այն, ինչ իր անունից տարածվել է, իր հետ որեւէ կապ չունի: Իսկ այն, ինչ փորձում են ներկայացնել որպես շնորհավորանք, ծաղրի եւ ամոթի դրսեւորում է: Սրա պատճառը մեկն է. Հայաստանը կորցրել է իր անկախությունն ու ինքնիշխանությունը, երկիրը գտնվում է արտաքին կառավարման տակ, եւ նրանց տեղական դրածոները չեն կարող իրենց տերերի դեմ դուրս գալ, նրանց կամքին դեմ որեւէ քայլ անել: Միայն Հայաստանի անկախությունը եւ ինքնիշխանությունը վերականգնելու դեպքում է հնարավոր ունենալ անկախ եւ սեփական երկրի շահերից բխող արտաքին քաղաքականություն, հարեւան եւ բարեկամ երկրների հետ կառուցել անկեղծ եւ արժանապատիվ հարաբերություններ: Իսկ ԻԻՀ Գերագույն առաջնորդ այաթոլլա Սեյեդ Մոջթաբա Հոսեյնի Խամենեին եւ իրանցի ժողովուրդը կարող են առանց Փաշինյանի շնորհավորանքի էլ պայքարել եւ հաղթել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 11.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՊԱ-ՈՒՄ

Ապրիլի 1-ին ուժի մեջ կմտնեն Հայաստանի Ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 11.12.2025թ. առաջարկած եւ Կենտրոնական բանկի կողմից հունվարի 30-ին գրանցված «ԱՊՊԱ ընդհանուր պայմանների» կանոնների փոփոխությունները: Ըստ այդմ, բարձրացվել են ապահովագրական գումարները, հատուցման առավելագույն սահմանաչափ է սահմանվել. գույքին պատճառված վնասների համար գործող 1 մլն 800 հազարի փոխարեն՝ 2 մլն 500 հազար, անձնական վնասների դեպքում՝ 3 մլն 300 հազարի փոխարեն՝ 3 մլն 500 հազար: Մեկ ապահովագրական պատահարի հետեւանքով բոլոր տուժողներին պատճառված վնասների հանրագումարը բարձրացվել է՝ համապատասխանաբար 25 մլն եւ 35 մլն դրամ:

«Կատարված փոփոխությունները պայմանավորված էին այն հանգամանքով, որ գործող ապահովագրական գումարները համահունչ չեն առկա իրողություններին եւ չեն ծածկում ԱՊՊԱ ոլորտում առաջացող վնասների զգալի մասը, փոփոխությունները հնարավորություն կընձեռեն՝ առավել ամբողջական պաշտպանել տուժողների շահերը»,- նշում են Բյուրոյից: Վարորդների շրջանում արդեն խոսում են, որ այս որոշման արդյունքում ԱՊՊԱ գումարներն ապրիլի 1-ից կրկին կթանկանան: Փորձեցինք ԱՊՊԱ ընկերություններից ճշտել թանկացումների հարցը: «Նաիրի ինշուրանս» ընկերությունից պատասխանեցին. «Վերջին թանկացումը՝ գումարի մասով, եղել է 2025թ. նոյեմբերին: 6 ամիսը մեկ են կատարում փոփոխությունները, բայց թանկացման հետ կապված՝ դեռ տեղեկություն չունենք: Առհասարակ, լինում են շուկայում փոփոխություններ, բայց հստակ, որ գումարի չափը բարձրացնում են, այս պահին չենք կարող ասել: Մենք էլ գիտենք, որ փոփոխություն է եղել, եւ այն ապրիլի 1-ից ուժի մեջ կմտնի»: «Սիլ ինշուրանս» ընկերությունից փոխանցեցին, որ ապրիլի 1-ից հետո նոր կարող են հստակ տեղեկացնել, թե ինչ փոփոխություններ կլինեն՝ օրենքը դեռ ուժի մեջ չի մտել:

Փաստաբան **Արտակ Խաչատրյանը**, որը մասնագիտացած է վարորդների իրավունքների պաշտպանության ոլորտում, մեզ ասաց՝ ապահովագրական բյուրոյի կողմից երաշխավորված չէ, որ գները չեն թանկանա. «Ապահովագրական գումարները վաղուց արդեն թանկացել են 40-60 տոկոսով: Վարորդներն արդարացի մտահոգություն ունեն, որ եթե շեմը բարձրացրին, հատուցումներն ավելի շատ են տալու, բնականաբար, սկսելու են հավաքագրումներն ավելի շատ անել: Սկզբից թանկացրել են ապահովագրական վճարները, հետո նոր սկսել են շեմը բարձրացնել: Դա զուգահեռաբար չարեցին, հետո հասկացան, որ շատ են գումար վաստակում, համահունչ չեն հատուցումների հետ, դրա համար էլ շեմը բարձրացրին: Ապահովագրական բանաձեւերով եւ կանոններով սահմանափակում չեն տվել վճարների չափի մասով, ասենք՝ իքս գումարից ավել իրավունք չունեին թանկացնելու կամ գին որոշելու, իսկ քանի որ հիմա ազատ շուկայական հարաբերություններ են ԱՊՊԱ գնի որոշման շրջանակներում, դրա համար թանկացումը բերեց շեմի բարձրացման, շեմի բարձրացումն էլ հետագայում կարող է բերել ապահովագրական գումարի թանկացման, եւ այսպես շարունակ»: Վերահսկող, զսպող մեխանիզմ չկա՞: «Գնորոշման ոլորտում բեսպրեդել է, չկա սահմանաչափ, չկան հստակ կանոններ: Այնքան այս թանկացումը կշարունակվի, մինչեւ քաղաքացիները համատարած բողոքեն, բողոքների հիման վրա հնարավոր է որոշումը վերանայել»: Իսկ ապրիլի 1-ից առաջ կնքված պայմանագրերի վրա դա կազդի՞: «Եթե չոր կանոններով նայենք, իհարկե, չէր ազդելու, բայց քանի որ ԱՊՊԱ կանոնները տարածվում են բոլորի վրա ու պարտադիր են բոլորի համար՝ ինչպես վարորդների, այնպես էլ՝ ապահովագրական ընկերությունների, հետեւաբար, բոլորի վրա դա կտարածվի: Լավն այն է՝ շատ դեպքեր կան, որ վնասի չափը լինում է 2 մլն 200 հազար դրամ, վնասը՝ 1 մլն 800 հազարը, ԱՊՊԱ-ն տրամադրում է, 400 հազարի համար մարդիկ պետք է դիմեն դատական պաշտպանության ու բավականին ծախսեր անեն՝ երկար սպասեն, այս դեպքում կհատուցվի առանց դատարան դիմելու»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am